

5

- 30

ՀՕՅ

ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

№ 5

Մ. ԶԱՐԱԳՅԱՆ

Ի՞ՆՉՊԵՍ ՑԵՎ ՎՈՐՏԵՂ ԿԱՏԱՐԵԼ
ՅԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տողագրվում է ՀՍԽՀ ԺՏԳԵլ-ի ծախքով

55

g - 30

ՅԵՐԵՎԱՆ

1929

12 APR 2013

11273

20 JUL 2013

ՀԱԽՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ՀԱԽՑ ԳԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲՅՈՒՐՈՅԻ ՀՐԱՍՏԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

1. Թ. ՃԳՆԱՎՈՐՅԱՆ.—ինչո՞ւ և ինչպի՞ս պետք է ուսում-
նակիրեթ ջրերը. 48 եզ 30 կոպ.
2. Ա. ՅԵ. ԺԱԴՈՎԱԿԻՆ.—Տեղական բնուրյան քանագարան
36 եզ 20 կոպ.
3. Ա. ԼԻՍԻՅԱՆԻ և ՅԵ. ԲՈՅԵՐՈՒԹՅԱՆ.—Հնուրյունին-
քի ցուցակագրությունն ու հիմքագրությունը
72 եզ 40 կոպ.
4. Ա. ԱՐԱՐՈՎԱՅԱՆ.—Ֆենոլոգիկ դիտողություններ. 67
եզ 50 կոպ.
5. Մ. ԶԱՅԱՅՅՅԱՆ.—ինչպի՞ս և վրատո՞ղ կատարել յերկ-
րաբանական դիտողություններ 69 եզ 50 կոպ.

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆԵԼՈՒ—ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

1. Մարդարանական
2. Հողագիտական
3. Բռնարանական
4. Կլիմայարանական
5. Կոռոկտորիֆ

 - ա) սպառկոռով.
 - բ) կուտանս.

6. Տնտեսագիտական
7. Եքսկուրսիան
8. Արդյունագործական
9. Գավառագիտական—քաղլուսվարական
(կազմակերպչական բնույթի)
10. Գավառագիտական—դպրոցական
(կազմակերպչական բնույթի)
11. Տնայնագործական
12. Առբանական

55

9-30

Ա. ԶԱՐԱՔՅԱՆ

**Ի՞ՆՉՊԵՍ ՅԵՎ ՎՈՐՏԵՂ ԿԱՏԱՐԵԼ
ՅԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

(Համառոտ ուղեցույց գավառն ուսումնասիրողների
համար):

ՑԳՐԱԿՈՒՄ Ե ՀԱԽՑ Ժ. Տ. Խ.-ի ԺԵԽԳՈՎ




ՅԵՐԵՎԱՆ

14645-57

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հրատարակելով Մ. Զառաֆյանի «Վորտեղ և
ինչպես կատարել յերկրաբանական դիտողություններ»
աշխատությունը՝ Կենտ. Գավառագիտական Բյուրոն
կարծում է, վոր դրանով վորոշ չափավ լրացրած
կլինի այն մեծ բացը, վորը նկատվում եր մինչև այժմ
դավառագիտական աշխատանքներում՝ հատկապես
յերկրաբանական բնագավառում։ Լինելով առաջին
փորձը՝ բնականաբար գրքույկը կունենա իր թերու-
թյունները, վորոնք կարող են նկատվել միմիայն
զործնականում ողտագործելու ընթացքում։ ուստի
բյուրոս մեծ չնորհակալությամբ կընդունի այս ուղ-
ղությամբ արված բոլոր տեսակի դիտողություններն
ու նկատողությունները։

ԳԱԻԱՆԻԱԳԻՑԱԿԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ



ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հանքատեղերը, հորերը, գեյզերները, հրաբխային ժայթքումները և այլ բազմաթիվ փաստեր գալիս են ասելու, վոր յերկրագնդի ներսը սաստիկ տաք և նրա բարեխառնության աստիճանը չափազանց բարձր։ Նշանակում է յերկրագունդը միայն յերեսից և ծածկված պինդ ու սառն կեղեվով, իսկ կեղեվի տակ գտնվում է նրա հրահեղուկ միջուկը։

Մյուս կողմից, հայտնի յե, վոր յերկրի մակերեսի բարձր, որինակ՝ լեռների գագաթները ծածկված են ձյունով, նույն իսկ, ամենատաք յեղանակներին։ Ողապարիկով բարձրացողներն եւ վկայում են, վոր 25 քիլոմետրից բարձր մթնոլորտի բարեխառնությունն իջնում է մինչև—61 աստ։ Այստեղից կարող ենք յեզրակացնել, վոր մթնոլորտի սահմաններից դուրս, յերկնային տարածության մեջ աներեվակայելի ցուրտ է։ Ուրեմն այդ ցուրտ միջավայրում յերկրագունդը յենթակա յե մշտական ցրտանալու պրոցեսին։

Կանու լապլասյան հիպոթեզի համաձայն յեզել ե մի ժամանակ, յերբ յերկրագունդն ամբողջովին չբաշեկ գագերի կույտ եր։ Այլ գագերը հետըզհետե խտանալով գառել են հրահեղուկ մի զունդ։ Կինտրոնաձիգ և կենտրոնախույս ուժերի ներգործության տակ այդ զնդի զանգվածը կազմող տարրերն իրարից անջատվելով՝ ծանր մետաղները, գլխավորապես նիկելն ու յերկաթը առանձնացել, կազմել են

նրա միջուկը, իսկ միջուկի շուրջը տեղավորվել են, և մեմատաբար ավելի թեթև մետաղների, կայծքարային թթուների աղերը, վորոնք հետադա սառեցման պրոցեսսների ընթացքում պնդացել և կազմել են բարակ յերկրակեղեց:

Անկասկած ցրտացման պրոցեսսը կատարվել է շատ դանդաղ, այնպես վոր կեղևագոյացության շրջանում, մի քանի անգամ կեղևը հալվել և նորից ե պնդացել: Մագմային գանդվածում տեղի ունեցող քիմիական և այլ ներքին ուժերի պատճառով, շարունակ յերկրակեղեց տատանվել ե մերթ խիստ արագ և կատաստրոֆիկ, մերթ աննկատելի դանդաղությամբ, բայց հարատես: Ներքին ցնցումներին հարակից՝ արտաքին ճնշող ուժերն անդադար կերպարանափոխել են յերկրակեղեցը, Այդ ուժերի աշխատանքն ընդմիշտ յեղել ե, կա և այժմս ել շարունակվում է:

Յերկրակեղեցի արտաքին մակերեսն ել ազատ չե մշտական պատահարներից: Նրա հանդիսատը վըրդովում են արեվը, ոյն ու զուրբ: Վերջինս իր յերեք վիճակում միշտ քանդողի և վերաշնորհի դեր և կատարել և կատարում է: Հոսող ջրերն ու սառուցները դարձեր շարունակ ցամաքի տարբեր շերտերը մաշում, տանում են և թափում ծովի հատակը: Ծովի հատակը կամաց-կամաց բարձրանում և կազմում և ցամաք, իսկ մի այլ տեղ նույն ցամաքը իջնում, դառնում և ծովի հատակ: Հարյուր-հազարավոր դարերի ընթացքում ծովն ու ցամաքը փոխարինում են միմիանց: Հնագույն շերտերի վրա կատարվում են նորերը և կազմում շերտավոր գանգվածներ: Վերջիններս նորից

խորանալով ավելի ներս, յենթարկվում են հսկայական ճնշման և բարձր բարեխառնության տակ դառնում բյուրեղաշերտ մետամորֆիկ տեսակներ: Հեցալ շերտերի արանքում յերեմն տեղավորվում և կազմում են յուրահատուկ իրարխային ապաներ: Վերջիններս ել արտաքին ուժերի ներգործությունից մաշվում են և նույն վիճակին արժանանում, ինչ վոր նախորդերը և այսպես անվերջ:

Այս ե յերկրագնդի կեղևի գոյության համառոտ պատմությունը, վորից հետո յերկրաբան-դավառագետին մնում և ուսումնասիրել նրա արդի վիճակը, այսինքն, մակերեսի կազմությունը, ջրագրական ցանցը, հողածածկը, կենդանական և բուսական աշխարհները (Փառունա և Փլորա), ստորյերկրյա ջրերը, աղբյուրները, կլիման և այլն: Իսկ այս բոլոր ուսումնասիրություններով և հավաքած փաստերով գավառագետը հնարավորություն կստեղծի վոչ միայն մեր յերկրի տվյալ վայրի ընդհանուր բնությունը ճանաչելուն, այլև աղջաբնակչության տնտեսական և քաղաքական կյանքի անցյալը, ներկան և ապագան:

Այդ տեսակետից մեր յերկերը քիչ ե ուսումնասիրված, տեղ-տեղ, նույն իսկ, բնակ' չի ուսումնասիրված: Սիրող գավառագետների վրա մեծ պարտականություն ե ընկնում այդ գործում ողնության գալու իրենց համեստ ուժերով: Ահա՛, այդ կարգի աշխատանքով զբաղվողներին ոժանդակելու ցանկությունն ե, վոր մեզ դրդել ե այս համառոտ ուղղեցույցը կազմել: Յերկրաբանական գիտողություններով զբաղվողը սրա մեջ կդանի յերկրակեղեցի կազմության կարևոր մոմենտները մինչ այժմ գոյություն ունե-

յող գենետիկ բացատրություններով և մի շարք ոժանդակակ տեղեկություններով: Յերկրաբանական դիտություններով զբաղվողից այնքան հմտություն չի պահանջվում, վորքան հետաքրքրություն և աչալություն: Պլանաչափ հետազոտությունների միջոցով մենք հանրավորություն ենք ստեղծում յերկրակեղեն ոգտագործելու մարդու պետքերի համար՝ լիոնարդյունաբերության, վոռողման, քարհանքի, ոգտակար հանածոների և այլն:

Վ." ըստ մենք են գավառն ուսումնասիրողի անմիջական աշխատանքի վայրերը՝ գետափ, լճափ, ծովափ, ձոր, քարհանք, կալվահանք, տունել, խճուղի, յերկաթուղի: Սակայն առանց հարկավոր գործիքների այդ վայրերն այցելել և անթերի աշխատանք տանել հընարավոր չե: Ուստի առաջին հերթին մենք նպատակահարմար գտանք ծանոթացնել ձեզ բոլոր անհրաժեշտ գործիքների և նրանց նշանակության հետ:

Ավելորդ չե մինի այստեղ հիշել հայտնի յերկրախույզ Ռեխտհոֆենի խոսքերը. «Հետախույզի տրամադրության տակ գտնված գործիքներից ամենակատարյալն ու ամենակարևորն աչքն ե: Նրա ուշադրությունից չպետք ե վրիպի, թեկուզ ամենաանհան համարված և վոչ մի բան. վորովհետև շատ անդամ այդ աննշան համարվածների տակ թագնված են լինում ամենալուրջ հետեւումների հիմքերը»:

Յերկիրն ուսումնասիրող գիտությունը կոչվում է յերկրաբանություն և ունի իր հետեւալ ստորաբաժնումները.

1. Դիմանմիք յերկրաբանություն, վոր ուսում-

նասիրում և արգի յերկրակեղեցի փոփոխությունները արևի, ջրի, քամու և այլ աղդակներից:

2. Պետրոգրաֆիա (քարագրություն), ապառների հատկությունների և նրանց գոյացության պայմանների ուսումնասիրությամբ և զբաղվում:

3. Ստրատիգրաֆիա (շերտագրություն), վոր ըգրագում և յերկրակեղեցի խավերի և շերտերի ուսումնասիրությամբ:

4. Տեխնիկա, վոր զբաղվում և յերկրի կեղեղի ծալքերի և լեռնաշղթաների ուսումնասիրությամբ:

5. Պալեոնտոլոգիա (հնեաբանություն), հին և ներկայումս անհետացած կենդանիների և բույսերի ուսումնասիրությամբ

և 6. Պատմական յերկրաբանություն, վոր ուսումնասիրում և յերկրագնդի անցյալի և նրա հետ տեղի ունեցած հաջորդական փոփոխությունները մինչեւ ներկա գրությունը: Այս մասն իր յեղակացություններն անում և նախորդ բաժինների տվյալների վրա հիմնվելով:

Այստեղ մեր գերն ավելի համեստ ե: Մենք միայն համարում և դարսում ենք հում նյութերն իրենց բընական վիճակում, իսկ նրանց գիտական բացատրությունները թողնում ենք ավելի մասնագետ յերկրաբաններին անելու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Դր. Г. Гельмерс. «Эволюция горных пород».
2. Դր. Ֆ. Դակե. «Геология» часть I.
3. » » » » II.
4. Проф. И. Вальтер. «Начатки Геологии»

5. А. Э. Константинович. «Геологич. Экскурс.»
6. Акад. А. Е. Ферсман. «Краткое руководство к собиранию минералов».
7. Проф. Я. С. Эдельштейн. «Как изучать геологич. строение края»
8. G. Colomb et C. Houbert «Géologie»
9. Marcellin Boule «Géologie»
10. Инж. О. Карапетян. «Геологич. очерк С. С. Р. Армении»
11. «Вселенная и человечество».
-

1. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ

1. Յերկրաբանական մուրճն : Նայած յերկրաբանական աշխատանքների բնույթին և վայրին՝ կարելի յե համապատասխան տիպի մուրճեր հանձնարարել : Յեթե աշխատանքները նստվածքային տեսակների մեջ եք կատարում, վորտեղ գործ պիտի ունենանք թերթաքարերի, կրաքարերի, կալվաքարերի և մերգելների հետ, լավե, վոր գործածեք փեթաթի (քլունկի) ձեւի մուրճ : (նկ.) Ավելի պինդ ապառների հետ գործ ունենալիս, ինչպես որինակ գրանիտի, գնեյսի, սիենիտի, բյուրեղային կրաքարերի և այլն, պետք է ավելի ծանր մուրճ ունենալ, որինակ՝ $1-1\frac{1}{4}$ կիլո ծանրությամբ : Մուրճի կոթը պետք է մոտավորապես 70 սանտիմետր յերկարություն ունենա և լավ է, վոր մետրական մանր չափեր լինեն վրան, վորպերզի հարկ յեղած դեպքում զանազան չափումներ կատարեք, որինակ՝ փոսերի խորությունը, ապառների շերտերի հասունությունը և այլն :

Այդ ձեւի մուրճերը թեպետ հնարավորություն են տալիս խոչըր բեկորներ ջարդելու կամ փշրելու, բայց մի այլ տեղում նբանք բոլորովին անպետք են : Որինակ՝ շատ անդամ հարկավոր ելինում մի մեծ ապառի միջից փոքր բյուրեղներ կամ բրածոներ առանձնացնել, կամ ձեռքում բռնած հանքին այս կամ այն ձեւ տալ . այդպիսի աջնատանքների համար ցանկալի յե, վոր մեծ մուրճի փոխարեն գործածեք ավելի փոքրերը, թեթե և 20-30 սանտիմետր յերկարության կոթերով : (նկ.)



2. Մի հատ յերկաքե բահ , ցանկացած տեղը հողից և ավելորդ մասերից մաքրելու համար :

3. Զանազան ձեփ և զանազան մեծության քարաքեկ գուրքեր (նկ. 5 հարթ . և նկ. 6 սրածայր) : Դուրի գործածությունը յերբեմն չատ և հեշտացնում աշխատանքը , ժամանակ և տնահեսում և հնարավորություն և տալիս ապառների միջից վորու և արժեքավոր բյուրեղ կամ բրածո գուրս հանելու :

4. Լավ կը լինի , վոր ձեզ հետ վերցնեք ռուլետ կամ ծայրահեղ դեսքում մոմլաթե մետր կամ ծալովի մետր՝ չերտերի հաստությունն ու յերկարությունը չափելու համար :

5. Մի սրվակ աղաթթուի թույլ լուծույթով ապառների բաղադրությունն ստուգելու համար :

6. Կողմնացույց , յերկրի կողմերը և չերտերի դիրքը վորոշելու համար :

7. Աներոխիդ ծանրաչափ՝ տեղի բարձրությունը վորոշելու համար :

8. Զերմաշափ՝ աղբյուրների ջրի բարեխառնությունն իմանալու համար :

9. Խոշորացույց ապակի՝ , վոր հանքահավաքի ամենամնաժամեցու գործիքներից մեկն և : 8-10 անդամ միծացնող ապակին հնարավորության կտա ապառների մեջ գտնված մանր հանգերը և բյուրեղների ձեզ լավ կիտելու , իսկ հանքարանությանը ծանոթ անձնավորության ձեռքին նա կծառայի վորպես հանքերի վերաբերմամբ նախնական վորոշում անելու միջոց :

10. Մի պայուսակ՝ ապառներ հավաքելու համար :

11. Գրպանի գրչահատ :

12. Ետիքետներ 6 × 4 սանտ . համարակալած . նըմուշների տեղը և ժամանակը նշանակելու համար :

13. Մեծ քանակությամբ թուղթ, կարելի յե և լրադիր՝ նմուշներ փաթաթելու համար:

14. Մի քանի հատ ապակե փորձանակներ՝ ավելի արժեքավոր և քնքույշ առարկաները՝ բյուրեղներ, հատիկներ և այլն պահելու համար:

15. Զանազան մեծության սովերաթղթե արկղիկներ. թող լինեն ծխախոտի գլանակների արկղիկներ:

16. Եժանագին բամբակի բավականին պաշար:

17. Քաթանի տոպրակներ՝ ցրվող և հողային կաղություն ունեցող իրերի համար: Այդ տոպրակները շատ ոգտավետ են նաև ուրիշ նպատակների համար. կարելի յե նրանց մեջ առանձին թղթերի մեջ փաթաթված փոքրիկ բյուրեղներ տեղափորել կամ ուրիշ մահրերեր:

18. Ավելի լուրջ հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ ե լուսանկարչական գործիք:

19. Յերկրաբանական սքեմաներ նկարելու համար գունավոր և հասարակ մատիտներ, ծոցատեր, հիշատակարան, ցանցավոր տեսր, գումի կամ շրեշ ետիքետները կպցնելու համար և թել կամ բարակ պարան:

20 Լավ հավաքածուներ կազմելու անհրաժեշտ պայմաններից մեկն ել խնամքով փաթաթելն ե: Գետը ե, ուղղակի որենք դարձնել, վոր մի թղթի մեջ յերբեք մի քանի տեսակներ չը փաթաթեք, վորքան ել նրանք փոքր լինեն: Անփույթ փաթաթելու հետևանքով շատ արժեքավոր երեր, մանավանդ փափուկ լեռնատեսակները, կարող են վոչնչանալ: Այս բանի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել:

21. Յուրաքանչյուր որինակ պետք է 2-3 թղթի մեջ պնել: Ետիքետները պետք է կպցնել թղթի վրա և վոչ

թե հանգի կասրի: Փիրուն և նույրի կազմություն ունեացող բյուրեղները չը պետք է փաթաթել բամբակի մեջ, այլ սկզբում ծխախոտի թղթի մեջ և ապա բամբակով պատել:

22. Բոլոր գործիքներն ու նյութերը պետք է մեկ ընդհանուր տոպրակի մեջ դնել և տոպրակն այնպես հարմարացնել, վոր կարելի լինի մեջքի վրա կրել: Այս տեսակ քսակի գործածությունը այն հարմարությունն ունի, վոր ձեռքերը ազատ կը լինեն ժայռերով վեր բարձրանալիս, վերջապես, յերբեմն կարող եք այնպիսի բեռ ունենալ, վոր ձեռքով տանել անկարելի յե:

Եքակուրսիալից վերադառնալիս շատ ուշադիր կերպով պետք է հանքերը դարսել արկղերի մեջ: Նմուշները պետք ե այնպես փաթաթեք թղթի մեջ, վոր երարկողքի դարսելիս միմիանց պինդ սեղմեն և նրանց առանձներում խոտ կամ տաշել զնեք: Անհրաժեշտ ե, բանքներում գոր արկղը մեկ փթից ավելի չը լինի և ամուր ու հուսալի նյութից շինված:

Արկղը դատարկելիս նույն զգուշությամբ իրերը կը հանեք և կը դարսեք այն հաջորդականությամբ, ինչ հանեք հաջորդականությամբ բնության մեջ գտել եք: Յեթե հավաքածուները թանգարանում եք պահելու, լավ ե վոր հավաքածուների մեջ լինեն, վորպեսզի չը հողմապակեծածկ արկղների մեջ լինեն, վորպեսզի չը հողմանարվեն և փոշի չը նստի վրաները:

Ետիքետները պարզ և ընթեռնելի ձեռվ լինեն դըրված, վորպեսզի այցելուները չը դժվարանան կարդալ ձեր գրած հարկավոր տեղեկությունները:

2. ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐ

Տվյալ վայրի լանտշաֆտները, լեռները, հովիտները, մարգագետիները, անտառները, հողի արգավանդությունը և բնակչությունը պատճառական կազմակցությամբ շղթայված են յերկրագնդի կեղեկի յերկրաբանական կառուցվածքի հետ։ Ի՞նչ դասավորություն ունեն ապառները, պի՞նդ են թե փափուկ, ջրաթափանցեն, թե ջրամերժ, հերկելի^o յեն, թե անբերի, որանք են այն գլխավոր խնդիրները, վորոնցով պիտի դրազվի, առաջին յերթին. գավառագետ-յերկրաբանը։

Սակայն այս խնդիրներն այնքան ել հեշտ լուծելի խնդիրներ չեն, վորովհետեւ յերկրագնդի կեղեկը կազմող հիմնական ապառները, համարյա, ամեն տեղ ծածկված են յերկու, միամանց վրա դարսված ծածկույթով. մեկը՝ բուսական, իսկ մյուսը՝ հողեահարության արգանքներով (հողով)։

Յերկրաբանական գիտողություններ կատարել հընարավոր ե միայն այն վայրերում, վորտեղ յերկրագնդի յերեսը, բնական, կամ արհեստական ճանապարհով հով հիշյալ ժածկույթներից մերկացած ե։

Բարձրաբերձ լեռների մերկ գաղաթները, ձորերը, կիրճերը, գեղ գետեղբերը, բուսականությունից զուրկ անապառները և ծովաղբյա ժայռոտ տեղերը պարզ դրսերում են յերկրագնդի կեղեկի ներքին շերտերի կազմությունը։


Այդ տեղերն ընդհանուր անունով կոչում են մերկացումներ։ Բնական մերկացումներն արհեստականից

աշարքերել հեշտ ե։ Առաջին դեպքում ժայրերի թեք կտրվածքներում մենք պարզապես տեսնում ենք հիմնական ապառների շերտերը, իսկ յերկրորդ տեսակի մերկացումները մեծ մասամբ տեսնում ենք քարահատարաններում, խճուղիների և յերկաթուղիների ճղվածքներում և տունելներում, հանքահորերում, ջրհորներում և տների հիմքեր կամ հորեր փորած վայրերում և այլն։

Ով եւ վոր լինի յերկրաբանական ուսումնասիրություն կատարողը՝ մասնագետ յերկրաբան, թե նորուս ոկոնակ, միւնույն և պետք ե իր ուսումնասիրությունն սկսի բնական և արհեստական մերկացումներից։ Գուցե դուք կարծում եք, վոր խոր քարանձավիներն ու այրերն եւ յերկրի կեղեկի կառուցվածքը ուսումնասիրելու համար հարմար վայրեր են։ Ճի՞շտ ե, սակայն դժբախտաբար, նրանց մեծ մասը ապառների այնպիսի տեսակների մեջ են գոյանում, վորաեղ մենք կեղեկի շերտավորում չենք տեսնում։

Այս նպատակի համար ամենից պիտանին քարհանքն ե և ձորը։ Այստեղ յերբեմն բավականին խորը մերկացումների ներքին շերտերում հնարավորություն ենք ստանում յերկրագնդի հիմնական ապառների և նըրանց վրա դասավորված վերին շերտերի մասին զարգացար կազմել։

Լեռնու յերկրներում, վորպիսին մեր յերկիրն ե, հենց գետնի յերեսից կարելի յի սկսել ուսումնասիրությունը։ Սովորաբար գետնի յերեսին փոված ե լինում փափուկ հողը, բայց այդ հողի վրա այս ու այն կողմում թափթափված են գանգիքանգույնի և զանազան մետաքսան քարեր։ Բնական և այդ քարերը շարժեք,



կամ հողի չերտը մի փոքր փորեք, և արդեն մանրակառացաւիկ հողի փոխարեն կդանեք խոշորհատիկ ավագ, քանի փորանում եք՝ հողն այնքան ավելի քարքարոտ և դառնում: Այդ քարերը վորոշ հիմնական ապառների բեկորներն են, վորոնք կարող են ձեզ ուղեցույց լինել իսկական ապառները դանելու համար: Յեկ, իսկապես շարունակեք ձեր աշխատանքը և դուք արդեն կնկատեք, վոր փխրուն կտորներին հետղհետե հաջորդում են ամենի մեծերն ու ամուրները և դուք վերջապես հասնում եք իմիմական ապարին:

Յեթև հողի յերեսին գտնված քարերի կտորները համեմատեք նրա տակ գտած հիմնական ապառի հետ, կտեսնեք, վոր նրանք այդ ապարի բեկորներն են: Ի հարկե վորոշ տարբերություն կնկատեք նրանց դույնի և կարծրության մեջ, վոր հետեանք և վերջիններիս հողմահարվելուն:

Յերբեմն պատահում եք այնպիսի քարերի, վորոնց ծագման վայրն այդ ուղինք դանել դժվար է: Զառիվայր լեռնալանջերի վրա մեծ մասամբ այնպիսի ապառների բեկորներ են գտնվում, վորոնք շատ բարձրից և հեռվից են զլորվել ջրի կամ սառույցի ողնությամբ: Վորքան լեռան թեքության անկյունը փոքր է, այնքան կողմանակի ապառների տեսակները հողի մեջ բազմազան են լինում:

Ընդհանրապես ցած հարթությունների բեկորային ծածկութը շատ հաստ և լինում: Շատ անգամ նրա ամրող զանդվածը հարեան լեռների գարավոր հողմահարության հետեանքով քայլայված մասերից և կաղմված:

Այսպիս ուրեմն, տեղում գտնված ամեն մերկացում

ուսումնասիրության արժանի յե: Բոլոր մերկացումները նկարեցեք, թեկուզ անարվեստ ձեռք: Շերտերի ընդհանուր պատկերը տալուց հետո պետք ե առանձին բացարականներով ու թվերով լուսաբանեք:

Արհեստական մերկացումներից ամենահաճանարարելին հանքատեղերն են: Միայն այնտեղ հնարավոր և հիշտ գաղափար կազմել յերկրագնդի կեղեկի կազմության մասին:

Զանազան մերկացումների ապառներից պետք ե այնպիսի կոլեկցիաներ կազմել, վոր տվյալ մերկացման լրիվ պատկերն ստացվի: Թարմ կտորները միշտ պետք ե հողմահարվածի կողքին դնեք, վորպեսզի նրանց տարբերությունն աչքի ընկնի: Այս աշխատանքի ժամանակ է, վոր յերկրաբանական մուրճի կարեքը պիտի դրաք:

Մերկացումներից դուրս գտնված կողմնակի ապառներն առանձին պիտի քննեք և իմանաք թե վորպաելից են նրանք այդտեղ ընկել, մոտակա լեռներից, հեռուներից, թե մոտիկ հեղեղատի ավագանից: Նմուշները փաթաթեցեք 2-3 թղթի մեջ: Յուրաքանչյուր կտորի վրա ետիքետ կպցրեք և վրան նշանակեք շերտի գտնված վայրը, ժամանակը, գտնողի անունը և ուրիշ հակարենոր տեղեկություններ: Առանց ետիքենաների՝ հակարենոր տեղեկություններ: Առանց ետիքենաների՝ հակարենոր գործնում են իրենց նշանակությունը:

Քարտեղի վրա նշանակեք ամեն մի հետազոտած վայրի ձիւտ տեղը:

3. ԻՆՉՈՒՄ ՍԿԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՆՄՈՒՇԵՐ
ՀԱՎԱՔԵԼՈՒԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Վորեկ տեղում նմուշներ հավաքելուց առաջ պետք
է տվյալ ըրջանի մասին նախնական տեղեկություններ
հավաքեք՝ թե տվյալ վայրը Ի՞նչով և հայտնի յերկրա-
բանական, հանքարանական կամ ոգտակար հանածո-
ների տեսակետից։ Այս խնդրում ձեզ կարող են ոգնու-
թյան գալ տեղի դիտնականները, հասարակությունը,
դրադրանները, թանգարանները, գաղրոցը և ուրիշ
մի շարք կազմակերպություններ և ընդհանրապես գրա-
կանությունը։ Եափնական ծանոթությունները զգալիո-
րեն կթեթևացնեն ձեր հետազա աշխատանքները։ Նախ
և առաջ դուք կիմանաք, թե վորոնումներն առաջին
Հերթին վո՞րտեղից սկսեք։ Յեթե տվյալ ըրջանում կը
ձարվէն տեղագրական քարտեղներ՝ անմիջապես զին-
վեցեք նրանցով, գունավոր մատիտով գծեցեք ձեր ըը-
շադայության ուղին և նշանակեցեք ամենակարեոր
հանքատեղերը։

Տեղ հասնելուն պես ձեր առաջին գործը կլինի բը-
նակչությունից տեղեկություններ հալվաքել, թե վո՞ր-
տեղից են քար հանում, վո՞րտեղից ինչ հանքային տե-
սակներ կան, վորտեղ կան ժայռեր և բնական մերկա-
ցումներ և այլն։ Յեթե վորեե տեղում նոր շենքեր են
կուռուցում կամ փողոցներ սալարկում։ անմիջապես
կանգ առեք և տեղեկացեք, թե վորտեղից են բերում շի-
նանյութերը։ Անհրաժեշտ է տեղեկանալ, թե մոտիկ
վայրում ճանապարհներ չե՞ն չինում, կամուրջ չե՞ն
ձգում կամ յերկաթուղու գիծ չե՞ն անցկացնում և
այլն։

Գյուղացիներից կտեղեկանաք, թե վորտեղ են հօր փոլում, վլո՞րտեղից են կավ հանում, կիր, ներկ և այլն: Նախնական հարց ու փորձի ժամանակ չպետք է մոռանալ նաև գետի հոսանքի կտրվածքների փլվածների, սարքը բարերի և սահումների (ՕՊՈԼԵՑՅ) ժամին տեղեկություններ հավաքել: Առանձնապես հարուստ նյութեր կարող եք հավաքել հանքահորերում, վորտեղ վոչ միայն պաշարն եք ուսումնասիրում, այլ և արդեն ձեռք բերած ողտակար հանածոներն ու նրանց կողքի ապառների փլվածքները:

Յերբ վորկե մեկը ձեզ հանքային նմուշներ և առաջարկում, առաջի հերթին պետք է ստուգեք նրա գտնված տեղը, քանակը, ինչ բանի համար գործածվելը և ապա դիտեք նրա առանձնահատկությունները:

Քարհանքը բարում, Հանքավայրերում կամ նըսանց մը-
շակման տեղերում պետք է ամեն ձեռք ընկածը հավա-
քել, թեկուր այն՝ վոր ձեր կարծիքով աննշան է, վո-
րովհետև շատ անդամ այդ աննշան համարվածների ող-
նությամբ կարելի յէ հարեան վայրում գտնել նույն
հանքավին տեսակի խոշոր զանդվածներ :

Յանկալի յէ, վոր հավաքած կտորներին վորոշ ձեւ
արվի. փոքր կտորները հաճախ անարթեք են և ավելորդ
տեղը թանգարանը ծանրաբեռնում են. Սակայն մյուս
ծայրահեղության մեջ ել չպետք է ընկնել, այսինքն
կտած որինակներին միորինակ ձեւ տալու համար փչաց-
նել նրա մեջ գտնված գեղեցիկ ու հետաքրքիր մասերը:
Յանկալի յէ, վոր կտորներն ունենան 13-15 սահմանակար-
կարություն, 8-10 սահմ. լայնություն և 4-6 սահմ.
հաստություն:

Հաղվագյուտ տեսակներից անհրաժեշտ է սկզբան

որինակ ունենալ լավերը թանգարանի և կովեկցիաների համար, իսկ մյուսները՝ քիմիական վերլուծության յենթարկելու:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել բյուրեղների վրա և մայր ապառի կտորից նրանց բաժանել, բայց այս ել չպետք է ի չարը գործադրել. մեծ մասամբ աշխատեցեք բնածին վիճակում պահել:

Այն վայրերում, վորտեղ գտնվում են այնպիսի ապառներ և միներալներ, վորոնք հողմնահարության պատճառով իիստ քայքայված են՝ պետք և ժայռերը կոտրելով թարմ կտորներ հանեք. վոչ մի դեպքում չը բավականաք այն բեկորներով, վորոնք գետնին թափված են և քարագոսներով ու մամուռներով պատաժ։

Զմուռնաք, վոր մեծ մասամբ եքսկուրսիայից վերադառները փոշմանում են, թե ինչո՞ւ այս կամ այն որինակներից շատ չեն վերցրել։ Ավելի լավ և հետո ավելորդը դեն ձգել, քան թե թերի հավաքածուներ ունենալ։


Սովորաբար սիրողները հրապուրվում են գեղեցիկ բյուրեղներով, վոր ի հարկե դատապարտելի բան չե։ Բայց տղեղ և հաճախ տղմի մեջ թաղված կամ հողածածկ միներալներն ել ունենում են իրենց հրապուրիչ կողմերը։ Միրողն արհամարհանքով անցնում են ըստանց կողքով, իսկ հանքաբանն անպատճառ պետք և կանգ առնի և առանձին ուշադրություն դարձնի նրանց վրա և յեթե սոսկ դիտումները նրան չբավականացրին, պետք ե դիմի քիմիական վերլուծության ոգնության։

Վոչ մի քար չարհամարեք, վորքան ել նա տղեղ տեսք ունենա։

4. ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

Ամեն դիտած բան պետք է գրի առնել՝ մոտավորապես հետևյալ անհրաժեշտ տեղեկությունները մոռացության ըլ տալով։

I. Խավերի նկարագրությունը վերևից ներքեւ 1,2, 3... նշաններով. յուրաքանչյուր խավի հաստությունը՝ բրածոները՝ ալառները և միներալները և նրանց դարբադության ձևն ու կարգը։



II. Հավաքած միներալների լրիվ ցանկը՝ թեկուզ վոչ ճիշտ անուններով։

III. Յուրաքանչյուր միներալի մասին հետևյալ տեղեկությունները։

1. Բյուրեղացած ե, թե վոչ։

2. Շատ կա՞, թե քիչ։

3. Կուտակումը մեծ ե՞, թե փոքր։

4. Գույշը բնական է, թե վորփոխված։
 5. Վոր միներալների հետ միասին և դանվում։
 6. Հողմնահարված է, թե վոչ։
 7. Հողմնահարությունից հետո ինչ կերպարանք և ընդունել։
 8. Տեղի բնակչությունը ի՞նչ անուն և տալիս։
 9. Վորեւ նպատակի համար գործադրվում է։
 10. Հանո՞ւմ են, թե վոչ։
 11. Վորքա՞ն են հանում։
 12. Ինչ ձեռ՞վ և պատահում. յերակներով, զանդաներով, թե բեկորներով։

IV. ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ԳՈՅԱՑՈՒԹՅԱՆ ՏԻՊԱՐԸ ՎՈՐՈՇԵԼ

- Նոտվածքային տեսակների վերաբերմամբ։
- Ա) Առաջն միներալի տեսակը. ապառի մո՞եց և նու, թե աղատ, յերա՞կ և կազմում, թե բուն։
 Բ) Կոնկրեցիաներ—նրանց դիրքը, կազմությունը, բաղադրությունը. միաձույլ է, թե խորշավոր. խորշերը ինչո՞վ են լցվում. կոնկրեցիայի հաստատությունը։

Բյուրեղային տեսակների վերաբերմամբ։

Բ) Յերակներ—ի՞նչ լեռնատեսակի մեջ են դանրվում նրանք և ինչ հաստատություն ունեն։ Ի՞նչ միներալներ կան յերակների մեջ և ինչ դասավորություն ունեն նրանք։ Յերակների մեջ խորշեր կա՞ն, թե վոչ, յեթե կան ինչո՞վ են լցված նրանք. ինչո՞վ են պատաժ յերակների ներքին պատերը։ Ի՞նչ տարրեր միներալների յերակներ կան տեղում. ի՞նչպես են քանդվում յերակները և ինչ ձեւ են ստանում։

V. ՅԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱԹԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՅԵՐԵՎՈՒԹՅՈՒՆԵՐ

ա) Այրերում. Ստալակտիտներ և ստալակմիտներ. կաթածներ. գուանո կամ սելիտրայի կիտվածքներ. աղծաղկանք և այլն։

բ) Ածխաշերտերում—պիրիտի և սֆերոսիդերետի կոնկրեցիաներ. սաթ. (գորշ ածուխի մեջ). աղծաղկունք պիրիտի (հրաքարի) ոքսիդացման արդյունքներ։

գ) Ճակիճներում և տորֆավայրերում. յերկաթոքսիդի կուտակումներ. կերպարանափոխված ճալաքարի (բուլաջինք) և ավաղաքարեր (կեղեակալած, գույնը փոխած և այլն։ Տորֆամշակույթի չոր վայրերում կապույտ վիվիանիտ։

դ) Կրաքարահանքերում. Կալցիտի (կրաշպաթ) բյուրեղների հետքեր, կայծքարային կոնկրեցիաներ և այլն։ Միաձույլ են, թե խորշավոր. մեղքերի և խորշերի մեջ ներկաթումներ կա՞ն։

յի) Աղբյուրների ականեֆներում. մրուրներ՝ մանավանդ բույսերի և քարերի վրա. տաք և գուլ աղբյուրների մեջ ձևափոխված ապաներ։

զ) Հանքային լներում. ի՞նչ մրուրներ կան և տարվա վոր յեղանակներին են գոյանում։ Բնակչությունը ոգտվում է այդ աղբյուրներից և ի՞նչ շափով։ Զկա՞ն ոգտվում է այդ պարբերաբար յերեալու և անարդյուք մրուրների պարբերաբար յերեալու և անետանալու յերեալութներ։ Մրուրների մեջ որդանիզմների հետքեր կա՞ն, յեթե այսո՛, ինչո՞վ են նրանք արտահայտվում։

5. ԱՊԱՌՆԵՐԻ ՎՈՐՈՇՄԱՆ ՊԱՐԶ ՅԵՂԱՆԱԿՆԵՐ

Հանքահավաքի հոգսերից մեկն ել պետք ե լինի
այն՝ վոր գտած նյութերին գոնե մի կողիտ անուն տա:
Բայց դրա համար հարկավոր ե նրանց բնորոշ հատ-
կություններն իմանալ:

Դաշտում կամ լեռներում մի վորեե քարի հանդե-
պելիս, առաջի վայրկյանին ձեր ուշադրությունը կդը-
րափի նրա գույնը, հետո կարծրությունը, իսկ ներքին
կազմությունն իմանալու համար պիտի դիմեք հանքա-
րանական մուրճի ոգնության: Պետք ե բաց անեք ձեր
առջև ընկած բեկորի յերեսը, այսինքն, նրան թար-
մացնեք՝ ավելորդ հողերից, քարաքոսներից և մա-
սուռներից ազատելով: Կածրությունը վորոշելու հա-
մար նույնպես կա դյուրին միջոց: Կարծրություն ասե-
լով յերկրաբանության մեջ հասկացվում ե միներալի
ցույց տված դիմադրությունը գծվելուն: Յերկու քա-
րերից պինդը նա յե, վոր մյուսին գծում ե: Յեթե զա-
նազան քարեր դանակով գծեք, չատ շուտով կհամոզ-
վեք, վոր մեկ քարի վրա նրա սուր ծայրը հեշտու-
թյամբ գծում ե, մյուսին դժվարությամբ ե գծում,
յերրորդին յերբեք: Ուրեմն հիշյալ քարերը տարբեր
կարծրություն ունեն: Մոսուր կարծրության մի աստի-
ճանցույց ե կազմել հետեւյալ տասը քարերից.

- | | |
|-------------------------------|-------------------------|
| 1. Թալ'կ-ամենափափուկ քարը | յերկուսն ել |
| 2. Գիպս կամ քարաղ | յեղանգով դժում են |
| 3. Կալցիտ | |
| 4. Ֆլուորիտ | Դժվում են ապակու կտորով |
| 5. Ապատիտ—գծվում ե պողպատով | |
| 6. Որթոկլազ—չի գծվում դանակով | |

7. Քվարց—պողպատի հետ կայծ ե տալիս

- | | |
|------------|---|
| 8. Տոպազ | Ամենակարծր և թանկագին համարված քարերն են |
| 9. Կորունդ | |
| 10. Ալմաստ | |

Այս հերթական կարգը ցույց է տալիս, վոր նը-
րանք մեկը մյուսից կարծր են: Առաջինն ամենից
փափուկն ե, յերկրորդը նրանից կարծր ե, վորովկետն
առաջնին գծում ե, յերրորդը յերկրորդից կարծր ե և
եր հերթին գծում ե, թե առաջնին և թե յերկրորդին,
չորրորդը նախորդ յերեքին և այլն: Միներալների հա-
վաքածու կազմողի համար կարծրության այս աստի-
ճանցույցն ել կարևոր գործիքներից մեկն ե: Յեթե
դժվարանում եք ձեռք բերել հիշված քարերը, ապա
ոգտվեցեք յուրաքանչյուրի դիմաց նշանակած միջոց-
ներից: Յեղունզը ձեզ հնարավորություն կտա 1-ին և
2-րդ աստիճանի կարծրություն ունեցող միներալները
վորոշելու, լուսամուտի ապակու կտորը՝ 5-րդի տեղը
կաարող ե բռնել, զանակը՝ կարող ե 6-րդ աստիճանի
կարծրությունը վորոշել, ավելի կարծրերը պողպա-
տով փորձելիս կայծեր են արձակում, 8—10 աստի-
ճանի կարծրություն ունեցողներն ընդհանրապես
թանկադին քարերն են և այլն:

Միներալների մի այլ հատկությունն ել քերպա-
կանությունն ե (հերձումն). մի քանի հանքեր այս կամ
այն ուղղությամբ ավելի հեշտ են հերձվում և բաժան-
վում են թերթերի: Միներալի հերձումն ունենալ կամ
շունենալը, նրա ճիշտ վորոշման կարևոր հատկու-
թյուններից մեկն ե:

Բեկրտականություն, յերբ հանքը կոտրվում է
անկանոն կտորներով, զանազան ուղղությամբ առհասա-

բակ հեշտությամբ փոշիանում և՝ կոչվում վիշտան. Վորի փոշին չի բաժանվում— փափուկ, իսկ բոլորովին չփոշիացողը— մածուցիկ, ևայլ:

Միներալների փայլն ել տարբեր աստիճաններ դռնի — ասում են մետադիմայլ, ապակեփայլ, ալմաստափայլ, սատափի փայլ, մետախսափայլ և նարպափայլ:

Այսուհետեւ պետք է հաշվի առնել նրանց բափանցկությունը, գույնը և տեսակարար կշիռը, վորպեսզի տվյալ միներալի վորոշումը փոքր է շատե կատարյալ լինի:

Ապառները կարելի յե նաև մանրադիտակի տակ ուսումնասիրել: Այս աշխատանքը մի փոքր ավելի խնամք և պահանջում: Վերցնում են վորեեւ ապառի մի բարակ ու հարթ թերթիկ, կանադյան բալ'զամով ամրացնում են մի փոքրիկ ապակու վրա, նաժդակով հղկելով լավ վողորկում են: Յերբ ապառի յերեսը բոլորովին հղկվեց՝ տաքացնում են, վորպեսզի բալ'զամը հալվի և ապառն ապակուց պոկվի: Հղկած յերեսը նորից կպցնում են ապակու վրա այնպես, վոր նրա տակը ողի բշտիկներ չմնան և այս անգամ սկսում են մյուս յերեսը հղկել: Յերբ ապառի հաստությունը 0,01—0,02 միլիմետրի հասագ՝ արդեն պատրաստ ե միկրոսկոպով գիտելու համար: Նրա վրա դնում են ծածկող ապակի և դիմում:

Յերբ մանրադիտակի տակ տեսնում են նրանց հատիկներն ու պարզում, թե նրանք միատարր են, թե բազմատարր, բյուրեղավոր են, թե զանգվածային, ըստ այնմ ել նրանց անվանում են:

6. ԱՊԱՌՆԵՐ

Յերկրախույզի հետազոտության գլխավոր առարկան ապառն է: Ամեն քայլափոխում նա հանդիպում է հողի, քարի, կավի, ավազի, կրի, մերգելի, զանազան թերթաքարերի, գրանիտի, բազալտի, պորֆիրի և այլն, վորոնք վոչ այլ ինչ են, յեթե վոչ յերկրակեղեց կազմող ապառներ:

Ի հարկե յերկրազնդի նախակեղեցի մասին խոսք լինել չի կարող, վորովհետեւ նրանից վո՛չ մի հետք չի մնացել: Մեզ հայտնի ապառները յերկրաբանական պիկելի նոր ժամանակների արդյունք են: Հարյուր միւլիոնավոր տարիների պատմություն ունեն նրանք և ծագման համաձայն նրանց կարելի յե բաժանել հետեւալ կատեգորիաների:

1. Մագմատիք հրային, վորոնք գոյացել են մագմայի սառելու և պնդանալու հետեւանքով: Ունենք մագմատիք հրաբխային ապառներ, վորոնք հրաբուղխների արդյունք են և մագմատիք պլուտոնական կամ խորբային ապառներ, վորոնք նույն մագմայից են գոյացել, բայց խորքում են սառել և պնդացել:

2. Սեղմիմենտային կամ նստվածքային ապառներ, վորոնք գոյացել են ջրավազանների հատակներում և ցամաքի յերեսին ջրերի, քամու և այլ գործոնների նորհիվ:

3. Բյուրեղաքիրթային մետափորիմիք ապառներ, վորոնք ունեն, թե առաջին և թե յերկրորդ կատեգորիայի ապառների հատկանիշները. նրանք ուժեղ ճընշման և բարձր բարեխառնության ազդեցության տակ մետամորֆիզմի յեն յենթարկվել:

Այս կարգով ել տանենք մեր հետազոտական աշխատանքները:

7. ՄԱԳՄԱՏԻՔ ՀՐԱԲԽԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐ

Յերկրագնդի կեղեկի կրած կողմնակի և վերտիկալ հսկայական ճնշումների հետևանքով շատ անդամ այքան խոր ճեղքվածքներ են դոյանում նրա մեջ, վոր հրահեղուկ մադման իր դազերի հետ բարձրանում է մինչև յերկրի յերեսը: Կեղեկի ճեղքերից դուրս են ժայթքում գոլորշիները և իրենց հետ հոսեցնում ապակեհալ գետեր—լավայի հեղեղներ: Հաճախ մադմայի անշան մասերը մակերեսի վրա կազմում են գլութեր և այնպես սառչում:

Յեթե կեղեկի ճաքերը մինչև մակերես չեն հասնում, այն ժամանակ գազերով հարուստ մադման մընում և խորքում, նրա հրաշեկ գոլորշիները հավաքվում են ճեղքերի վերի մասերում և հարևան ապառների՝ որինակ կրաքարերի մեջ, փորում են անցքեր, թնդանոթների վարուսումով պատուում են կեղել և իրենց հետ դուրս չպրառում հսկայական բեկորներ: Նրանց դուրս յեկած տեղում առաջանում են ձագարանման փոսեր: Շատ անդամ նրանց գործունեյությունը սրանով ել սահմանափակվում է: Յերկրի խորքում մադման սառչում և այլևս դուրս չի գալիս, իսկ ձագարան բացվածքը լցուում է ջրով և կազմում մասք կամ հրաբխայի լին:

Փորձերի հիման վրա սպազուցել են, վոր տաք ջրային գոլորշիները կրաքարերի վրա նույն մաշող ազդեցությունն են անում, ինչ վոր խիստ ուժեղ թըթուները: Ուրեմն զարմանալի չեն, յեթե նրանք յերկրա-

կեղեկի կրային բաղադրություն ունեցող մասերը քայրայեն և նույն իսկ ծակեն:

Հրաբխային վայրերում յերկրակեղեկի պատըռվածքը միայն սկիզբն է համարվում հետագա հրարդիսային գործողությունների: Յեթե կեղեկի պայթումից հետո մագման զրկված է լինում գազերից՝ հոսում է վորպես լավա: Յեթե նրա մեջ գեռ ևս մեծ քանակությամբ գոլորշիներ կան, նա ուռչում է, փըրփում և միլլիոնավոր պղպջակները պատվում են կ փոշիանալով գոլորշիների հեղեղներ: Հետ միասին բարձրանում են յերկինք վորպես հրաբխային մլխիրի ամպեր:

Փոշիանան գոլորշիները բարձրանում են տասը քիլոմետրից ավելի, քամին քշում, տանում և նրանց հեռավոր տեղեր և նույն իսկ ովկիանոսից այն կողմ, իսկ համեմատաբար ծանր մասերը թափվում են ցած հրաբխավայրին մոտիկ և կազմում են ողաճն հրաբլխաբերան:

Վոյ վոք չի կարող ասել, վոր հրաբուփը հանգել է, կամ նախագուշակել նրա նորից գործելու մասի: Մի հրաբխային սար կարող է կոնուսաձև լինել առանց լավային հոսանքի և մեկ ուրիշը ծածկված լավայի անթիվ: Հեղեղատներով, այդ յերկու գեղքում ել ջուրն իր ավերիչ դերն է կատարում: Ահա մեր հետախույզ յերկրաբանի աշխատանքն ել հենց այդ պետք ել լինի, վոր այդ ավերակների և նրանց բեկորների տակեից՝ հրաբխային գործունեյության արդյունքները փնտրի և գտնի, վորտեղից վաղուց սրբվել ու լվացվել են նրանց հետքերը: Ինչպես վոր փորձառու ձարտարապետները հինավուրց դղյակի ավերակների մնացորդներից վերաբտադրում են անհետացած չենք:

ձեւ, այնպէս ևլ փորձառու յերկրաբանը հրաբիսային խմբի քանդկած մասերից վերակազմում և նրա ձեւ ու պատմությունը։ Հողմահարության հետևանքով բացված պատանման յերակները, հրաբիսային ապառների լավային հեղեղատները, բազալտյան սյուներ և այլն, այդ պատմության լուս վկաներն են։

Այստեղ արդեն փորոշ հմտություն և հարկավոր դորակեսպի հոսած լավան, հրաբիսային մոխիրից տարբերենք կամ պիկչուայն (լեռնաճյութ) և ոբսիդիանը սովորական հալած ապակու հետ չըշփոթեք։ Նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե մաղմայի սառեցման պրոցեսը ինչ թափով և կատարվում։ Յեթե նա արագ և կատարվում և փոքր ձնչման տակ, այն ժամանակ արդյունքը լինում է ոբսիդիան. (ապակենման զանգված), իսկ յեթե դանդաղ և կատարվում և մեծ ձնչման տակ այն ժամանակ նրա արդյունքը լինում է ավելի պիստ և բյուրեղացած զանգված։ Բյուրեղն ապակուց տարբերվում է իր ներքին ժանրահատիկ կազմությամբ։ Ապակու մասնիկներն անկանոն են, իսկ բյուրեղինը կանոնավոր, այդ պատճառով ժիկնույն նյութի բյուրեղացած մասնիկներն ավելի քիչ են բռնում։ Այսպէս ուրեմն՝ յերկրի խորքերում սառչող մազման վերին շերտերի ձնչման տակ բյուրեղանում է, իսկ դուրս հոսածը—ապակիանում։

Սակայն կարող և պատահել, վոր մագման դուրս ժայթքելուց առաջ նախ բյուրեղանա և ժայթքելուց հետո միայն վերջնականապես սառչի. այդ ժամանակ նրա բյուրեղները մտնում են ապակե զանգվածի մեջ և կազմում մի խառը լեռնատեսակ, վորը կոչվում է պորֆիր։

Մագմայի մեջ գտնված զանազան քիմիական բազադրությունները կամ գոլորշիների տարբեր քանակը և սառչելու պայմանները տալիս են հարյուրավոր ապառների այլատեսակներ։

Մեր յերկրում գտնված հրաբիսային ապառներից ամենատարածվածներն են .—

1. Որսիդիան կամ հրաբիսային ապակի. միաձույլ զանգվածով և գերազանցապես ապակու կառուցվածքով։ Հայաստանում կան նրա զանազան տեսակները խոչոր զանգվածներով։ Յերեվանյան գավառի Նոր-Եկեղալյանքի գյուղի մոտ, Հաղեսլեռան շուրջը և ուրիշ տեղեր : Նա գլխավորապես պետք և գալիս ապակու արդյունաբերության մեջ։

2. Պետքանց թեթեվ, ծակոտիկավոր, ապակենման զանգվածք և հրաբիսային ժայթքումի արդյունք։ Ֆիզիքական և քիմիական շատ գնահատելի հատկություններ ունի. գործ և ածվում պինդ քարեր, փայտ և մերազներ հղելու համար, ապակի պատրաստելու, շինարարական գործի մեջ, վորպես շինանյութ և այլն։ Առ հասարակ նա խոչոր արդյունաբերական նրանակություն ունի։ Առաջ այդ հանքը Խտավիայից երբ բերգում միուսաստան, բայց այժմ Հայաստանում գլունված պեմզան իր հատկություններով գերազանցում է արտասահմանում յեղածներից։

Հայաստանում պեմզան գտնվում է կամ զանազան մեծության կտորներով, առանց վորեւ խառնուրդի, կամ ամբողջ շերտերով, վորպես պետքայի ավագ։

Տեխնիկայի մեջ պահանջվում է, վոր պեմզայի կտորները լինեն բավականաչափ խոչոր, համենայն դեպս վոչ բռունցքից փոքր։ Առանձին շերտեր կան

սպիտակ և մոխրագույն, թևթեղ, բավականին ծակոտիալոր, ամուր կառուցքած քով և վոչ շատ փխրուն, վոչ եւ շատ կոտրվող և առանց կողմնակի նյութերի խանուրդի : Շուկայի պահանջն այս ե :

Գավառագետ հանքահավաքի համար այս ասպարեզում բավականին հետաքրքիր աշխատանք կա և հարուստ նյութ : Պեմզայի հանքատեղին գլխավորապես տեղավորված ե Արագածի շուրջը և Սևանի լճի արևմտյան հրաբուխային կենտրոնների շրջանում : Այդ բոլոր շրջաններից առայժմու շահագործվում են Անի կայարանի մոտ, Զաղա գյուղի և Արագածի արևմտյան փեշերում, Մեծ Քյափանակ գյուղի շրջանում և այլն :

Պեմզայի հանքերը Ղոշավանքից տարածվում են մինչև Զաղա գյուղը, Ախորյանի աջ ափին : Հիշյալ վայրերում պեմզայի հանքերը ամեն տեղ ծալվագած են տուֆի բավականին հաստ շերտերով : Մեծ Քյափանակ, Զերուխու և Մուխմանջուկ գյուղերի մոտ բարձր վորակի պեմզաներ կան : Բավականին լավ հատկությամբ պեմզա կա Եջմիածնի գավառի Կարպաջարան և Քալաչամ գյուղերի մոտ : Պեմզայի մանրունք գտնվում ե Ելլար, Վերին և Ներքին Ախոր, Ծաղկաձոր Դղմաշեն, Բաշ-Արարան և Միրաք գյուղերի մոտ և այն :

Պեմզայի մեծ կտորներ գտնվում են նաև Նոր-Նիկոլայեվկա, Սուխոյ-Ֆանտան, Քյանքան, Քեթանդաղ և այլուր :

Գտահում ե նաև Գարբազ, Լոռի-Փամբակի շրջանում Գերանի շրջանում և Զանդեղուրում :

Ընդհանրապես այս ողտավետ հանածոն Հայաստանում շատ առատությամբ տարածված ե և նրա պաշարը հսկայական ե : Մնում ե, վոր մեր սիրող գավա-

ռագետները լրջությամբ ուսումնասիրեն իրենց չըջանաները և կարեւոր նյութեր հավաքեն այդ ուղղությամբ : Լավագույն որինակները մանրամասն տեղեկություն ներով ուղարկեն գավառագիտական թանգարաններին և լեռնային բաժին :

3. Տուփեր .-Հրաբուխային տուփը հրաբխային մոխրի շաղախից կազմված մի զանգված ե . Մնում է կարմիր, սև կամ խայտարղետ : Հեշտությամբ տաշվում ե և սղոցով : Այս գոյացություններից մեզ մոտ գտնվում են կոլագերան կայարանի մոտ, Ծաթեր գյուղում -Փիւղայան տուփ, Շահալիի մոտ պինդ տուփեր : Զանազան գույնի տուփեր կան յերկաթուղագծի յերկարությամբ սկսած Ղարսիքելիսից վոչ հեռու Արջուտ գյուղից մինչև Յերևան : Գլխավոր յերակներն ընկած են Յերևանի և Լենինականի շրջակային լեռներում :

4. Տուփանման լավաներ .-Այս գոյացություններից առաջին աեղը պիտի տալ Արագած լեռան ստորոտներում գտնված Հայոնի, չափազանց թեթև և ծակոտիսկոր տուփուղային, վորի գլխավոր կայաններն են Արթիկ, Խաչքիլսա, Ղփչաղ, Մահմանճուղ և այլն : Բաղմաթիկ փորձերը ցույց տվին, վոր այդ տուփուղան, իր լավագույն հատկություններով ամենատիգիալական շինանյութն ե, ամեն տեսակ շինարարական նպատակների համար : Այս շինանյութի բարձր հատկությունների պատճառով այժմ անց ե կացվում յերկաթուղագիծ Արթիկ գյուղից մինչև Լենինական, Վորպեսզի «Արթիկ տուփը» արտահանեն ԽՍՀՄ-ի . կենտրոնական մասերը շինարարական լայն նպատակների համար : Տուփուղայի պաշարն անսպառ ե և կարող ե յերկար տարիներ ծառաայել Խորհրդային Մի-

ության շինարարության համար ձեռընառու տնտեսական պայմաններով։

5. Բազալ'տ-ավելի յերիտասարդ ապառներից եւ ՍԱ գույն ունի, շատ ծանր եւ, տեղ-տեղ նկատվում են ոլիվինի կանաչ բյուրեղներ։ Սյունաձև զանդվածներ եւ կազմում-հատվածակողմ ձեւրով։ Զանդուի ափերում բարձրանում են բազալ'տի բազմաթիվ սյուներ։ Առաջնակարգ շինանյութ եւ Գոտնվում եւ Թիֆլիզից դեպի Յերևան յեկող յերկաթուղարծի ուղղությամբ Սաստախլո կայարանից մինչև Յերևան։ Հայաստանում բազալ'տը հալելու փորձ եւ կատարված։ Միկրոսկոպիկ գիտողությունը ցույց է տվել, վոր բազալ'տի սև գույնն առաջանում եւ նրա մեջ զտնված մազնիսական յերկաթի ոքսիդից, այդ եւ պատճառը, վոր բազալ'տի մի քանի տեսակները մագնիսի սլաքի վրա ազդում են։

6. Տրախիտ-բաց մոխրագույն և յերեմն կապտաց վուն հրաբուաքար եւ Տրախիտով հարուստ և Դիրակությար գյուղը։ Տրախիտը գործ են ածում մեղանում փողոցի մայթերը սալարկելու համար։

Առհասարակ վերոհիշյալ ապառներով հարուստ են Հայաստանի Խոնավ կամ Մթին լեռները, Աղմաղանի Հրաբուային պլատոն, Արագածի շրջանը և այլն։

8. ՊԼՈՒՏՈՆԱԿԱՆ ԿԱՄ ԽՈՐՔԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐ

Ինչպես ասացինք Հրային ապառները տարբեր տեսք եւ կազմություն ունեն, նայած թե ինչ պայմաններում են պնդացել։ Համեմատության համար վերցնենք գրանիտն ու բազալ'տը։ Գրանիտի մեջ շատ հեշտությամբ դուք կարող եք նկատել նրա բաղադրիչ միներալները՝ բարդ իր բնորոշ ճարպափայլով, փայլարն իր բարակ ու նուրբ թերթիկներով և վերջապես նրա հիմնական գլխավոր մասը՝ որթոկլազ կամ դաշտային շպաքը։ Բազալտի մեջ դուք շատ հազվագյուտ դեպքերում կկարողանաք զանազաննել նրա նուրբ ասեղանման բյուրեղները, վորոնք դաշտային շպաթի խմբին պատկանող ապառների հատուկ բնորոշչիներն են։ Գրանիտի խոչորհատիկ բյուրեղները և Բազալտի ասեղանման բյուրեղներն արդեն բազ ապացույց կարող են լինել այդ յերկու լեռնատեսակների գոյացման բոլորովին տարբեր պայմաններ ունենալուն։ Գրանիտները սառել են յերկրագնդի խորքում քարե հաստ վերժակների տակ շատ դանդաղ, այդ պատճառով նրանց բաղադրիչ տարբերը բավականին ժամանակ են ունեցել խոշոր և արտահայտիչ բյուրեղներ կազմելու։ Խոկ բազալտը սառել է հանկարծակի, ժակերեսին ավելի մոտիկ կամ հենց նրա վրա՝ այդ պատճառով ստացել և կիսապակե կառուցվածք (ըստարուկտուրա)։

7. ՀՐԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐԸ ԿԱԶՄՈՂ ԵՑԱԿԱՆ ՄԵՆԵՐԱԼՆԵՐԸ

Հրային ապառները բնորոշվում են իրենց մեջ պարունակած մեներալներով, վորոնք բազմաթիվ և բազ-

մազան են, բայց նրանցից ամենաեյականներն են—քր-
փարքը, դաշտային շոտապը, փայլաքը, ամֆիբոլը, պի-
րոքսինը և պերիդոտը:

1. Քվարց—սիլիցիումի ռքսիդ ե. շատ կարծր ա-
պառ ե, վոր ընդունակ ե ապակի և պողպատ գծելու։
Բյուրեղը վեցանկյունանի պրիզմա յէ, յերկու ծայրե-
րին վեցանկյունանի բուրգերով։ Մակայն զուտ
կանոնավոր բյուրեղ շատ հազվագյուտ ե, քվարցի բյու-
րեղները հաճախ միմյանց հետ խառնված են լինում և
հիմքում տծե, այնպես վոր բյուրեղների միայն մի
ծայրն ե յերկում։ Մաքուր քվարցը թափանցիկ
և ապակենման ե և կոչվում ե—հիալին, յերբ գորշա-
գույն ե—միամած, մանուշակագույնը—ամետիստ և
այլն։ Քվարցի բաղադրությամբ, բայց բյուրեղի տար-
բեր ձեւ ունեն խալցեղոնը, ագաքը, ոնիքսը և ոպալը։

2. Դաշտային շպաք—կրկնասիլիկատ ե, այսինքն
բաղկացած ե սիլիցիումի ոգսիդից, վոր թթուի գեր ե
կատարում և յերկու հիմքային ոգսիդներից, վորոնցից
մեկը անպայման ալյումենիումի ոգսիդն ե, իսկ մյոււը
կարող ե լինել կալիումի, նատրումի և կալցիումի ոք-
սիդներ։ Այսպես ուրեմն բազմաթիվ դաշտային շպաք-
ներ կան։

Դաշտային շպաթները քվարցից նվազ կարծր են,
բայց նույնպես ապակին գծում են։ Բացի այդ նրանք
մեկ ուրիշ աչքի ընկնող հատկություն ունեն, մուրճով
շարժած կամ հերձվում են յերկու ուղղությամբ։ Յերեք
տեսակ դաշտային շպաթներ կան, —որքովազ ամենա-
տարածվածն ե—ալյումինիումի և կալիումի սիլիկատ,
2) ալրիտ—ալյումենիումի և նատրումի սիլիկատ և
3) անորքիտ—ալյումենիումի և կալցիումի սիլիկատ։

3. Փայլաք—Նույնպես կրկնասիլիկատներ են ալ-
յումենիումի, կալիումի և մագնիումի, բացի այդ նը-
րանք իրենց մեջ պարունակում են յերկար և յերբեմն
իիքին։ Փայլաքները բյուրեղանում են վեցանկյունանի
տափանակների ձևով, վորոնք բաժանվում են
չափազանց բարակ և թափանցիկ թերթիկների։ Նրանք
կարծր չեն, յեղունգով կարելի յերձման յերեսի վրա
գծել։ Բազմազան փայլաքներ կան, վորոնք միմյանցից
սարբերվում են իրենց քիմիական բաղադրությամբ։
Կալիունական փայլաքը սպիտակ է հայտնի յե Մոսկվիտ
անունով։ յերկաթ-մագնեղիական փայլաքը մեծ քա-
նակությամբ յերկաթ է պարունակում, ու գույն ունի,
և կոչվում է թիոտիտ։ Սիբիրում և Հյուսիսային Ամե-
րիկայում մեծ քանակությամբ փայլաքներ կան։ Նրանց
թափանցիկ թերթիկները գործ են ածում կերասինկա-
ների և ավտոմոբիլների համար, վորպես կրակի գի-
ւացող ապակի։

Բ. ՀՐԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐ ԿԱԶՄՈՂ ԳԼԽԱՎՈՐ
ՄԻՒԵՐԱԸՆԵՐԻ ԱՄՓՈՓ—ՏԱԽՏԱԿՐ

| | | |
|---|---|----------|
| I. ՔՎԱՐՑ | Ասգույն | Հիալին |
| ՄԻԼԻՑԻՑԻՑԻՄԻ | Գորշագույն | Միխամած |
| ՈՔՄԻԴ | Մանուշակագույն | Ամետիստ |
| | Չանաղան գույնի | Խալցեղոն |
| | | Ագաթ |
| | | Բնիքս |
| | | Ոպալ |
| II. ԴԱՇՏԱՅԻՆ | Ալբումինիումի և կալիումի սիլիկատ | Ոթովկլազ |
| ՇՊԱՐ | Ալբումինիումի և նատրումի սիլիկատ | Ալբիտ |
| | Ալբումինիումի և կալցիումի սիլիկատ | Անորթիտ |
| III. ՓԱՑԼԱՐ | Ալբումինիումի և կալիումի ջրային սիլիկատ | Մոսկովիտ |
| | Ալբումին. կալիումի, մագնեզ. և էրկաթե սիլիկատ | Բիոտիտ |
| IV. Մագնեզիումի, կալցիումի յերկա- թի և ալբումինի սիլիկատ | Ավելի յերկաթ, քան կալցիում | Ամֆիբոլ |
| | Ավելի կալցիում, քան յերկաթ | Հորնբենդ |
| V. Մագնեզիումի և յերկաթի սիլիկատ | Կանաչ | Պերիդոտ |
| | | Ոլիվին |

գ. Պլուտոնիական կամ խորհային ապառներից ամենատարածվածներն են.

1. Գրանիտ.—կալիսնական դաշտաժապաթի, նատուրնական դաշտ. չպաթի, քվարցի և մուգ կամ բաց գույնի փայլարի խառնուրդ մի ապառ է: Կան բազմաւեսակ գրանիտներ մոխրագույն, կարմրավուն, խոշորհատիկ, մանրահատիկ և այլն: Ամենատարածված գրանիտներն են զանգվածայինները. պատահում են նաև պորֆիրանմաններ: Գրանիտներն հաճախ հողմնահարվում են և զառնում ավաղախիճեր, վորոնց մանր ու խոշոր բեկորները ջուրը քշում և տարածում են հեռավոր վայրերը:

2. Սիենիտ.—վոր իր անունն ստացել է Յեգիպտոսի Սիենա քաղաքի անունից. արտաքինով շատ նման է դրանիտին, բայց վարցից գուրկ ե, փայլարին փոխարինում և ամֆիբոլը: Նրա բաղադրության գլխավոր մասը կազմում է կալիսնական դաշտային չպաթը:

3. Գիորիտ.—իր մեջ պարունակում է կրանատրոնական դաշտային չպաթ և ամֆիբոլ—այս ապառը մուգ գույն ունի, հաճախ կանաչավուն:

4. Գտթբրո.—վորի մեջ գերակշռում են կրանատրոնական դաշտային չպաթը և պերոքսինը խառն մուգ գույնի միներալների հետ:

5. Պերիդոտիտ—բացառապես գունավոր և սև միներալներից է կազմված:

Դ. ՀՐԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

| | | | | | | | | |
|--------------------------------|--|--|---------------|------------------------|------------------------|-------------------|---------------|--|
| I ԳՐԱՆԻՏԱ- ՆՄԱՆ ԱՊԱՌՆԵՐ | Գրանիտ . | <table border="0"> <tr> <td>Քվարց</td> <td></td> </tr> <tr> <td>դաշտա- շպաթ (որթոկլատ)</td> <td></td> </tr> <tr> <td>փայլ (Բիոտիտ)</td> <td></td> </tr> </table> | Քվարց | | դաշտա- շպաթ (որթոկլատ) | | փայլ (Բիոտիտ) | |
| Քվարց | | | | | | | | |
| դաշտա- շպաթ (որթոկլատ) | | | | | | | | |
| փայլ (Բիոտիտ) | | | | | | | | |
| Գրանուլիտ | <table border="0"> <tr> <td>Քվարց</td> <td></td> </tr> <tr> <td>դաշտա- շպաթ (որթոկլատ)</td> <td></td> </tr> <tr> <td>փայլար (Մոսկովիտ)</td> <td></td> </tr> </table> | Քվարց | | դաշտա- շպաթ (որթոկլատ) | | փայլար (Մոսկովիտ) | | |
| Քվարց | | | | | | | | |
| դաշտա- շպաթ (որթոկլատ) | | | | | | | | |
| փայլար (Մոսկովիտ) | | | | | | | | |
| Գեղմատիտ | <table border="0"> <tr> <td>Քվարց</td> <td>մեծ</td> </tr> <tr> <td>դ. շպաթ</td> <td>բյուրեղներով</td> </tr> <tr> <td>փայլար</td> <td>առանձնացած</td> </tr> </table> | Քվարց | մեծ | դ. շպաթ | բյուրեղներով | փայլար | առանձնացած | |
| Քվարց | մեծ | | | | | | | |
| դ. շպաթ | բյուրեղներով | | | | | | | |
| փայլար | առանձնացած | | | | | | | |
| II ՊՈՐՖԻՐՈՒԴ- ՆԵՐ | Սիենիտ | <table border="0"> <tr> <td>Քվարց-չկա</td> <td></td> </tr> <tr> <td>դ. շպաթ (որթոկլատ)</td> <td></td> </tr> <tr> <td>ամֆիբոլ</td> <td></td> </tr> </table> | Քվարց-չկա | | դ. շպաթ (որթոկլատ) | | ամֆիբոլ | |
| Քվարց-չկա | | | | | | | | |
| դ. շպաթ (որթոկլատ) | | | | | | | | |
| ամֆիբոլ | | | | | | | | |
| Դիորիտ | <table border="0"> <tr> <td>Քվարց-չկա</td> <td></td> </tr> <tr> <td>դ. շպաթ (անդեզին)</td> <td></td> </tr> <tr> <td>ամֆիբոլ</td> <td></td> </tr> </table> | Քվարց-չկա | | դ. շպաթ (անդեզին) | | ամֆիբոլ | | |
| Քվարց-չկա | | | | | | | | |
| դ. շպաթ (անդեզին) | | | | | | | | |
| ամֆիբոլ | | | | | | | | |
| Գաբրոն | <table border="0"> <tr> <td>դ. շպաթ (լաբրատոր)</td> <td></td> </tr> <tr> <td>պիոռքսին</td> <td></td> </tr> <tr> <td>Քվարց-չկա</td> <td></td> </tr> </table> | դ. շպաթ (լաբրատոր) | | պիոռքսին | | Քվարց-չկա | | |
| դ. շպաթ (լաբրատոր) | | | | | | | | |
| պիոռքսին | | | | | | | | |
| Քվարց-չկա | | | | | | | | |
| III ՄԻԿՐՈԼԻ- ԹԻՔ ԱՊԱՌՆԵՐ | Պորֆիր- | <table border="0"> <tr> <td>Սիկլոպահուլիտ</td> <td></td> </tr> <tr> <td>ներ:</td> <td></td> </tr> <tr> <td>Քվարց-պորֆիր</td> <td></td> </tr> </table> | Սիկլոպահուլիտ | | ներ: | | Քվարց-պորֆիր | |
| Սիկլոպահուլիտ | | | | | | | | |
| ներ: | | | | | | | | |
| Քվարց-պորֆիր | | | | | | | | |
| Տրախիտ | | | | | | | | |
| Բազալտ | | | | | | | | |
| IV Ապակենման | Գեմզա | Որոշութիւն | | | | | | |

9. ՆԱՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐ

Պինդ ժայռերը զանազան պրոցեսների ազդեցության տակ մաշվում են, սկզբում աննկատելի կերպով, բայց դարերի ընթացքում հետզհետե նկատելի :

Ապառների քայլքայման պրոցեսներում դեր են խռում :

1. Բարեխառնության տատանումները, վորոնք ավելի խիստ արտահայտություններ են ստանում տաք և անձրևազուրկ շրջաններում (քամի) :

2. Սառույցը կամ ավելի վորոշ ասած, ապառների ձեղքվածքներում սառչող ջուրը : Ամենքին հայտնի յէ, վոր ջուրը սառույց գառնալիս ընդարձակվում է և արտապուղոր ուժ ստանում :

3. Մասնակի թրջվելն ու չորանալը. կավային ապառների վերին շերտերը փոշիանում են :

4. Անձրևը—մթնոլորդի միջոցով անցնելիս իր մեջ լուծում է, ի հարկե փոքր քանակությամբ թթվածին և ածխաթթու գաղ, վորոնք հետագայում ապառների վրա խիստ քայլքայիչ աղդեցություն են ունենում :

5. Ոդի թրվածինն ել մասամբ քայլքայում է ապառները :

6. Բռյանքն ու կենդանիները ևս իրենց դերն ունեն :

Այս ընդհանուր յերեսույթը, վոր հողմնահարումն եղում կամ ժողովրդի ասած բամահրություն՝ պատճառ է դառնում լեռների մերկացման :

Քամահրած, ապառների փշրանքները քամու և ջրի միջոցով տեղափոխվում են զանազան վայրեր և նստե-

լով ջրավազանների հատակում կամ ցամաքի յերեսին կազմում են նստվածքային ապառներ: Նստվածքային ապառները շերտ-շերտ դարսվելով միմյանց վրա դարերի ընթացքում միաձուլվում են, պնդանում ու քարանում:

Նստվածքային ապառներն իրենց ծագմանը նայելով բաժանվում են հետևյալ կատեգորիաների:

1. Բեկորային
2. Որդանածին
3. Քիմիական

Ա. Բեկորային ապառներն առհասարակ գոյացել են մյուս ապառների փշրանքներից: Յեթե այդ փշրանքները կամ թեկունները խոչըր են և անկյունավոր՝ կոչվում են քարախնիներ: Վերջիններս գետերի հոսանքին յենթարկվելով հղկվում են և անկյունները կլորանում, այն ժամանակ կոչվում են նալաքար: Գետերի հունով ճանապարհորդող ճալաքարերը զնդանեն են լինում, իսկ ծովերի ծփանքներին յենթարկվածները՝ տափակ: Ճալաքարերը կամ լիփուկները մանրանալով դառնում են խոշոր ավազ, իսկ սրանք ե'լ ավելի մանրանալով—ավազ:

Բաղադրիչ նյութերի համապատասխան ավագները լինում են.

1. Սպիտակ բվարցի մաքուր ավազ,
2. Մերգելյան ավազ—յեթե ալազի հետ խառն ենակ կիրը:
3. Փայլարակագ—փայլարի թերթիկների հետ խառը.
4. Ժանգոտ-ավազ—յերկաթի հետ խառը.
5. Կավախառն ավազ—ավելի մանրահատիկ և կըպչում:

6. Գլավիկոնիտ—Յերկաթի և կալիումի ջրային սիլիկատ ե: Սա միայն խոր ծովերի հատակումն է լինում:

7. Ածխախառն, մոխրախառն, սև և այլ տեսակի ավագներ: յերք ալազի հետ շաղախիլում են ջրի մեջ լուծված բնածխական կիր, յերկաթ, կայծքար և այլն:

8. Ավազաքարեր—լինում են մանրահատիկ և խոր չորահատիկ: Սրանք կրի, կավի և կայծքարային թթուների հետ ցեմենտացած ավագներ են, վորոնք ճնշման տակ պնդացել և դառել են քար: Դաշտային շպաթի հետ խառն խոչըրհատիկ ավազաքարը կոչվում է արկոզ, ավելի հին դարաշրջանների թերթավոր ավազաքարերը—գրուվակի, իսկ պինդ և ուժեղ ցեմենտացածները—քվարցիտ:

9. Բրեկչիա—Անկյունավոր բեկորներից բաղկացած մի ապառ ե, սաոցաղաշտերի բերած: Լինում է բարդ և պարզ, պինդ և թույլ՝ նայած ինչ չափով ե ցեմենտացած: Այս ապառի մեջ յերբեմն պատահում են վոսկորների հետքեր:

10. Կոնգլոմերատ—կլոր խիճերից ցեմենտացած ապառներ են. ունենում են պարզ և բարդ ձեւեր: Սրանց մեջ ևս յերբեմն պատահում են կենդանիների վոսկորների և բույսերի մնացորդներ: Զարիսեչում գտնվում ե բազմազույն կրաքարային կոնգլոմերատ:


11. Կավեր—Դաշտային շպաթի կամ դաշտային շլոպաթ պարունակող ապառների հողմնահարության արդյունք են—կավերը: Զուտ-սպիտակ կավը կոչվում է կասղին-կամ նենահող: Բվարցի և այլ տարրերի հետ խառը հողը—կավառատ հող. կրային տղմի հետ խառը—մերգել, քվարցի փոշու հետ—տիղմ, քվարցի և կրի-

Գոշու հետ—լյոսս, ածուխի հետ—ածխակավային թերթաքար, աղերի հետ—զռասիյաք կամ շռահող, չպի հետ—շպակալ և այլն:

Վերջապես պալեր կամ վալումներ, վորոնք սառցադաշտերի առաջացրած բնորոշ ավազակավային բեկորներ են:

Բ. ԱՐԳԱՆԱԾԻՆ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐ

Նախական ապառների հողմնահարված տարրերը՝ կրածին, մագնեզիում, կալիում և նատրում լուծվելով չեն մեջ յերկրորդական ապառների հետ խառնվում և կազմում են նոր լեռնատեսակներ: Այսյերնու յթը հասարակ ֆիզիքական յերկույթ չե, այլ որդանիզմների մեջ կատարվող քիմիական պրոցեսների-արդյունք: Զրային մի քանի բույսեր և կենդանիներ ընդունակ են վերև հիշած լուծույթներն սոստագործել, վորոնց խառնուրդից պատրաստվում են նրանց արտաքին կմախքը, խեցին կամ զրահը: Ծովային կենդանիների այդ մասերը կազմված են բնածխաթթվի կրից, կայծաքարից և լուսածնաթթվի կրից: Ծովի ջրի մեջ լուծված աղերի միջն հաշվով 3,6 տոկ: Ճճմբաթթվային կալցիում և, վորը կենդանի որդանիզմի մեջ քիմիական ուսակցիայի ժենթարկվելով նրա պինդ մասերի կառուցման վրա յետիսավում:



Հիշյալ որդանիզմները մեռնում են և ձգողական ուժի չնորհիվ նրանց դիակներն իշնում են ծովի հատկը, վորտեղ նրանց փշրված ու տրորված կմախքի

մասերը մեծ քանակությամբ կուտակվում են և կազմում կրային տղմի նստվածք: Այդ տիղմը վոր չառանդամ կոչվում է «Գլոբիգերինյան», վորովհետև Գլոբիգերին կոչված արմատուտանիների խեցիներից և կաղմված՝ հսկայական տարածություններ և բռնում: Այդ կրային տիղմի շերտերն իրար վրա գիրզելով ամրող կավճի լեռներ են կազմում: Չորս կիլոմետր խորության մեջ կրային խեցիները լուծվում են, բայց նրանց փոխարեն կուտակվում են կայծաքարային կըմախքների մնացորդներ, վորոնք կազմում են «մաղիսարյան տիղմ»: Յերկրագնդի անցյալ պատմության հեռավոր շրջաններում ծովի հատակ կազմող այդ մրնացորդները դուրս են յեկել յերես և կազմել են ցամաք: Կալիումը, նատրումը և մագնեզիումը սովորաբար ծովի ջրից չեն բաժանվում, բայց հատակի բարձրանալու դեպքում, յերբ ծովի առանձին մասերն անջատվում են ու կտրված մնում, բարձր բարեխառնության աղդեցության տակ ջուրը գործշինուած է և նրա մեջ լուծված աղերը բաժանվում են. ամենից առաջ բաժանվում է զժվար լուծելի անհիդրիտը (CaSO₄) հետո մեր գործածական աղը (NaCl) և վերջիվերջու կալիումի աղը, վոր այնքան մեծ դեր և խաղում հողի արհեստական պարարտացման գործում: Պերջինները քիմիական ծագում ունեցող ապառների խմբին են պատկանում, վորոնց մասին առանձին կը խոսենք, իսկ այժմ թվենք որդանածին նստվածքային տեսակներից ամենատարածվածները:

1. Կրաքարեր.—Պինդ նստվածքային տեսակներին են պատկանում, վորոնք գոյացել են զանազան կենդանիների խեցիների կամ կմախքների բեկորներից կամ

ծովային աղի ջրի, կիսաղի կամ անաղի ջրերի մեջ բուսած բույսերի արտադրանքից: Հաճախ ամուռ ցեմենտանում են և բյուրեղանում: Լինում են սպիտակ, գեղին, մոխրագույն, կապույտ, դորչ, կարմիր, խայտաբղիտ և այլ տեսակի կրաքարեր: Առհասարակ շայտանը շատ հարուստ ե կրաքարերով, վորոնք իրեւ շինանյութ լայն գործածություն ունեն:

Դավալուի և Համամլուի կիրը գործածվում է մետաղահաման և քիմիական արդյունաբերության մեջ և կարբիտ են ստանում:

2. Մարմարներ.—Մետամորֆոզի յենթարկված բյուրեղած կրաքարեր կամ մարմար: Յերեանի գավառի Միսիանա ձորում և գյուղի մոտ թափանցիկ սպիտակ մարմար: Վերջերս բազմաթիվ և բազմատեսակ մարմարահանքեր են գտնվել Արգայանդի և Աղվերանի շրջանում: Իջևանում նույնպես կան մարմարանման կրաքարեր, վիմագրաքար, վորոնք գործ են ածվում շինությունների ճակատը զարդարելու համար: Զարնեչում զանազան գույնի կրաքարային կոնդլումներատանք կան:

3. Կավիթ:—Մպիտակ, հողախառն կրաքար:

4. Դոլոմիտ:—Մերտ կազ ունի կրաքարերի հետ, մեծ մասամբ գոյանում և նրանից բնածիսաթթվի մաղմեղի հետ խառնուրդ կազմելով: Լինում ե սպիտակ, մոխրագույն, դորչ, ավաղախառն, պինդ կամ բրիջներով: Հաճախ դատարկություններ և ծակեր են գոյանում նրա մեջ: Կորալյան ոիֆերը շատ հաճախ փոխվում են դորոմիտի:

5. Տրիպոլիան կավ կամ ինֆուզորյան հող:—Դիատոմների տիղմ, վոր տալիս և սկիզբ կայծքարային

լեռնատեսակների: Հաճախ խառն ե լինում կրաքարերի և կավճի հետ: Յերեան անխառն, փափուկ և ծակոտիագոր ապառ և կազմում և կոչվում ե տրիպոլյան կավ: Շատ թեթև և կրակի դիմացող դեղնամոխրագույն սպիտակ հող: Հայտ գավառի կրաքարերը և Առհասարակ շայտանը գավառի Դիրակլյար և Մեծ-Քամիանակ գյուղերի մոտ: Յերեանի գավառի Փարփի, Արամուս, Արկել, Քաղսի, Թեղաբարադ գյուղերի մոտ և Նոր Բայազետի գավառի Յերանոս, Վալիաղուլու, Ղըլաղ գյուղերի և Դարալագյազի, Գնդեվազի մոտ և այլն:

6. Ֆոսֆորիտ:—Բացի կրաքարերից և կայծքարյին տեսակներից որդանական ծագում ունեցողների թվին պետք ե գագել նաև լուսածնաթթվային ապառներ: Համարյա ամեն որգանիզմ իր մեջ պարունակում է փոքր քանակությամբ լուսածին (Փոսֆոր): Այն տեղերում, վորտեղ մասսայական որգանիզմների կոտորած ե լինում, այնտեղ հալաքվում ե լուսածնական թթու, վորը միանալով կրի հետ, տալիս ե նոր ապառ, վոր կոչվում ե՝ ֆոսֆորիտ:

7. Բնածխական որգանական ծագում ունեցող ապառներն առաջացել են բույսերից: Ամեն մի բույս իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ ածխածին: Անտառում թափած տերեաների և ծառերի ճյուղերից ստացվում ե ածխածնով հարուստ փտաշող: Ճաշճային մամուռները տարածվելով ստորին շերտերում կազմում են սպունդանման զանգված, վորը չորանալուց հետո դառնում ե՝ տորֆ: Յերբ տորֆը կամ տերեախառն փտահողը վերեկից ծածկվում ե կամփի կամ ավազի շերտով, նա այնտեղ պահպանվում է, պնդանում և դառնում ե ավելի պինդ և ամուր շերտավոր միներալ,

վորը կոչվում է—լիգնիտ կամ գորշ ածուխ։ Ամենառածեղ ճշգման տակ լիգնիտը դառնում է քարածուխ։ Հետազայում, յերբ ճնշումը շարունակվում է և միաժամանակ նրա միջոց հեռանում են ցնդող նյութերը, ըստացվում է մի անձուխ-ածուխ կամ անտրացիտ։ Յեթե անդրացիտը յենթարկվում է խիստ ուժեղ կրակի աղդեցության այն ժամանակ նրանից կստացվի մի միենբար, վոր զուտ ածխածնից է կազմված և կոչվում է—գրաֆիտ։ Այն ածուխները, վորոնք յուղերով հարուստ են կոչվում են Բիտումինոլ թերթաքարեր։

Հայաստանի մի քանի ըրջաններում գտնվում են բավականին լավ հատկության քարածխի հանքեր, որինակ Յերևանի գավառի Գիրմանիս, Լենինականի Զաջուռ գյուղի մոտ։ Նույնպես Դիլիջանի գավառում, բայց վեռ լավ ուսումնասիրված չեն և նրանց գործնական արժեքը պարզված չե։

Նոր-Բայազետի, Եջմիածնի, Դիլիջանի, Լոռի-Փամբակի և Լենինականի գավառներում կան տորֆային շերտերով ծածկված փոքրիկ տարածություններ, որոնք միայն տեղական պետքերին կարող են ծառայել։

Գ. ՔԻՄԻԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊԱՌՆԵՐ

Քիմիական ծագում ունեցող նստվածքային պառներն առաջացել են լուծույթներով հագեցած և ովկիանուներից կորված ջրափոսերում։ Զուրը դոլորչեցել է, նրա մեջ լուծված նյութերը կենորոնացել են և կաոյմել հագեցած լուծույթներ և ապա տականք տվել։ Այս ճանապարհով առաջացել են աղը և գիպսը։ Քիմիական նստվածքային տեսակներ գոյանում են և մեր որեւում, գոյացել են և յերկրաբանական նախնական դա-

բաշրջաններում—քարաղ կամ աղունակ։ Քարաղը հսկա շերտեր ե կազմում և հսկայական անձեւ զանդվածներ։ Այս կարգի ապառների թվին են պատկանում կրային և կայծաքարային տուփերը, վորոնք վոչ թե զափոսերում են կազմվում, այլ ցածաքում։ Անձրևի ջուրը մասսամբ գոլորշիանում ե և մասսամբ ծծվում ե հողի մեջ և գառնում ստորերկրյա։ Յերբ ստորերկրյա ջրերը հասնում են վորեւ ապառի, վոր ջուր չի ծծում, սկըսում են հոսել, գլխավորապես շերտերի թեքվածքով և, յերբ յելք են գտնում, հոսում են ձորը կամ գետափը, վորպես աղբյուր։ Ստորերկրյա ջրերը երենց մեջ պարունակում են ածխաթթու, վոր լուծում ե կիրը։ Այդպիսով աղբյուրի ջուրը հոսելիս նրա ածխաթթուն ազատվում է, իսկ կիրը նստում է բարակ շերտով ջրի մեջ գտնված բոլոր առարկաների վրա, մեծ մասսամբ մերձեղերյա բույսերի վրա։ Ժամանակի ընթացքում բույսերը փտում են և մնում ե միայն, թեթև, խիստ ծակոտիավոր և անշերտ լեռնատեսակ, վոր կոչվում ե—կրաքարային տուփ և վորի մեջ զանվում են բույսերի, տերենների և ճյուղերի բաղմաթիվ գլուխներ։

10. ԳԼԽԱՎՈՐ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐԻ
ԱՄՓՈՓ ՏԱԽՏԱԿ

| | |
|------------|----------------------|
| ԿՐԱՔԱՐԵՐ | Կալցիտ |
| | Մարմար |
| | Ոոլիտ |
| | Կավիճ |
| | Կիր |
| | Վիմագրաքար |
| | Տրավերտին |
| ԿԱՎԱՔԱՐԵՐ | Կառլին (ձենահող) |
| | Կավ (կաղապարիչ) |
| | Կավաթերթաքար |
| ԿԱՑՇԱՔԱՐԵՐ | Կայծքար (գալախազ) |
| | Ավազ |
| | Աղորիքի քար |
| | Կանգլոմերատ, պուդինգ |
| Ա Դ Ե Բ | Գաճ (գիպս) |
| | Աղքար, աղումակ |
| | Կրաշպաթ |
| ՈՐԴԱՆՈԾԻՆ | Անտրացիտ |
| | Քարածուխ |
| | Տորֆ |
| | Տրիպոլիտ կավ |
| | Գումանոս |
| | Կոբալտ |

11. ՄԵՏԱՄՈՐՖԻԿ ԲՅՈՒՐԵՂԱՇԵՐՅ ԱՊԱՌՆԵՐ


Մետամորֆիք ապառները մեծ մասամբ ֆիզիքա-քիմիական պրոցեսների արդյունք են: Բարձր աստիճա-նի ջերմության և հսկայական ճնշումների ազդեցու-թյան տակ նրանք պնդացել, բյուրեղացել և շերտա-վորվել են: Որինակ՝ Հողմնահարության հետևանքով դաշտային շպաթից և փայլարից ստացված կավը իջ-նելով յերկրի խորքերը յենթարկվում ե բարձր աստի-ճանի ջերմության և ճնշման տակ կերպարանափոխվում ե. նրանից ստանում ենք կավային և փայլարային քեր-քաքարեր:

Մետամորֆիք ապառներից եԳնեյսը, վոր միւնույն գրանիտն է, միայն նրա բաղադրիչ մասերը մետամոր-ֆիզիքի յենթարկվելով որինաչափ դասավորություն են ստացել և շերտավորվել:

Նայած ճնշման և բարեխառնության ուժին մետա-մորֆիկ ապառները տարրեր տիպի յեն լինում. կավա-յին թերթաքարերից ստացվում են ֆիլիխներ, վերջին-ներից-փայլարաքերաքարեր և վերջապես ԳՆԵՑՍ (տես ապառների և վույտուցիոն տախտակը):

12. ԱՊԱՐՆԵՐԻ ԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Համապատական պարունակություն



13. ՄԵՏԱԼԱԶԱՆՔԵՐ

Նայած թե հանքաքարերն ինչ դասավորություն ունեն, ըստ այնմ ել կոչվում են յերակ կամ զանգված։ Հրարդային յերկույթիների բացատրության ժամանակ մենք տեսանք, վոր յերակները վոչ այլ ինչ են, յեթե վոչ հիմնական լեռնատեսակների շերտերի արանքը մտած լիցքեր, վորոնք իբր ոտարածում տարրեր նրանց չերտե։ Ըստ միմրանցից բաժանել են. այնպես վոր շատ անգամ գժվարությամբ ենք վորոշում, թե դորձ ունենք նորմալ միջ-շերտի, թե յերակի հետ։ Մետաղահանքերի մեծ մասը այս ճանապարհով է գոյացել, միայն շատ քչերը ծովային նստվածքների արդյունք են, վորոնք յերկար ժամանակներից հետո յենթարկվել են գիտենետիկ փոխառությունների։ Ինչպես ասացինք մետաղահանքերին պատկանող յերակները նստած են լինում ապառների ձեղքերի մեջ։ Այդ ձեղքերով բարձրացող տաք-ջրի միներալներով հարուստ գոլորչիները և շատ քիչ բացառությամբ նաև սառը ջուրը ձեղքերի պատերի վրա պնդացած մրուրներ կամ բյուրեղներ են դոյացնում։

Կան նաև այնպիսի շերտեր, վորոնք իբրենց գոյացության մոմենտից արդեն մետաղներ ունեն։ Բոլոր ապառներն իրենց մեջ պարունակում են այս կամ այն քանակությամբ յերկաթի միացումներ, վորոնք հողմահարվելիս ստանում են մուգ-կարմիր ժանդի գույն։ Յերբեմն նրանք հաստ շերտեր են կազմում և ներկայանում են վորպես ուրույն ապառներ, որինակ՝ գորշ յերկաթաքար, նաև այլին յերկաթահանի, լորահանի,

կարմիր յերկաքաքար, յերկաքի փայլուկ, և տեղ-տեղ
եւ մագնիսական յերկար:

Մետաղահանք նստվածքների կողքին շատ անդամ
սպատահում են կոնկրեցիաներով լցված դժվար բաժա-
նելի տեսակներ: Իրը որինակ՝ կարող ենք վերցնել մեր
յերկրի ծծմբական հրաքարերը (պիրիտ), ֆոսֆատնե-
րը, պղնձական հրաքարերը, խալկոպերիտ, ծծմբական
կրաքարերը և այլն:

Հայստանում մետաղահանքերի բավականին ըն-
դարձակ տարածություններ կան Ալլահվերդու և Զան-
գեղուրի շրջաններում:

Ալլահվերդու շրջանը մի ժամանակ յեղեւ և հրա-
բույշների ինսենսիվ գործունեյությամբ կրկես, յերկ-
րաբանական մի քանի դարաշրջաններում: Ալլահվեր-
դու և Շամլուղի հանքատեղերն հարուստ են պղնձի և
ծծմբական հրաքարերով, յերեմն նաև ցինկի և բա-
ցարիկ դեպքերում մկնդեղի հետ խառը: Այս հանքերն
ընդգրկող ապառներն են քվարցը, պորֆիրը նաև դիա-
սը:

Ալլահվերդու շրջանում գտնված մետաղահանքերի
գլխավոր տեղերն են Ախթալա, Շամլուխ, Շահալի-իլ-
յար, Սիսի-մաղան, Գետաձոր և այլն:

Զանգեղուրի շրջանում՝ Արկեզ, Փիրդուռդան,
Գեղինան, Գյուրջի քյանդ և այլն:

Բացի վերոհիշյալ հանքերից, Սևանի հյուսիս-արև-
ելյան ափերում դտնվում ե խրոմի-յերկաքաքար, Դա-
րալազյազի գալառում՝ ցինկ-կապար—Գյումուշ-խանի
և Կազմայուրթ: Լոռի-Փամբակում և Դիլիջանում փոքր
քանակությամբ մարգանեց: Զանգեղուրի Փիրդուռդա-
նում՝ մոլիբդենիտի փայլուկ:

14. ԲՐԱԾՈՒՆԵՐ ՅԵՎ ԴՐՈՇՄՆԵՐ

Յուրաքանչյուր ապառ ունենում է իր բնորոշ
հատկանիշները, վորոնց միջոցով կարելի յե գտնել
նրա ծագումը: Այդ բնորոշ հատկանիշներից մի քանիսը
ապառի բաղադրիչ անորգանական նյութերն են և մի
քանիսն ել նրա մեջ պարունակվող որգանիզմների մնա-
ցորդները, վորոնք ընդհանուր անունով կոչվում են
բրածներ և դրոշմներ:

Նախ և առաջ մեզ համար պարզենք, թե ինչ են
իրենցից ներկայացնում այլ բրածո և դրոշմ կոչված-
ները: Այստեղ արդեն անհրաժեշտ է կենդանաբանա-
կան և պալեոնտոլոգիական (հնեաբանական) մի քանի
գիտելիքներ: Բրածո և յերբեմն ֆարածո վոր ասում
ենք, չպետք է հասկանալ մի ինչ վոր կենդանու կամ
բույսի անպայման քարացած որինակը, այլ այս տեր-
մինը գործ և ածվում ավելի լախ իմաստով, այսինքն
անհետացած բույսի կամ կենդանու մնացորդը կամ
հետքը: Որինակ: Սիրիորի հավիտենական սառած հողի
շերտերում գտնվել է մի մամոնտ, վորի թե մաշկը և
թե մազերը տեղն են, մինչև անդամ նրա մկանները,
ներքին որդաններն ու ստամոքսի պարունակությունը
մնացել են անփոփոխ, բայց այնուամենայնիվ նա մեզ
համար բրածո յե: Սաթի մեջ փակված մի միջատ,
վոր բոլորովին անհետացել ե և նրա փոխարեն մնացել
ե ոլով լցված մի խորչ, դարձյալ բրածո յե: Հսկայա-
կան սալամանդրի վոտքի հետքերը ավազաքարի վլա-
նույնպես յերկրաբանի համար բրածներ են և այլն:

Փամանակակից մեռած բույսերի և կենդանիների հետքերը բրածոներ չեն։ Միայն ծովի հատակից ցամաք գուրս նետվածները կոչվում են կիսաբրածոներ։ Մեծ մասամբ անհետացած որդանիվմներից մնում են միայն տպակածքներ։ Տիպ կամ դրոշմ, ուս որդանիզմի արտաքին ձեն և, իսկ նրա խեցիի ներքին պարունակությունը կոչվում է—միջուկ։ Հաճախ այլ յերկուսի արանքներում լցվում են քայքայված խեցիների մասնիկներ և կամ ինչպես ապառի ճեղքվածքներում, այսպես ել այստեղ՝ լցվում են քիմիական նորանոր գոյացումներով՝ կիր, կարծրարային թթու, մետաղներ, աղեր, ասֆալտ և այլն։

Բույսերի տերեկի նյութերը փոխվում են ածուխի կամ մի այլ դեպքում բոլորովին փոռում են, բայց լեռնատեսակի մեջ մնում են նրա Դրոշմը։ Խոշոր վողնաշարավորների վոսկորները ջրի ներկայությամբ դառնում են փուսր և փափուկ, այդ պատճառով ապառի միջից հանելուց առաջ լավ և սոսինձ ծծեցնել։ Ծովային կենդանիների պատյաններն ու խեցիները մեծ մասամբ կրային զանգվածներ ունեն, այդ պատճառով յերկրի շերտերի մեջ լավ են պահպաժ լինում։ Յեթե նույնիսկ նրանց բաղադրիչ նյութերը բոլորովին լուծված լինեն, դարձյալ ապառի մեջ թողնում են իրենց գրոշմը կամ միջուկը, վոր ապառից կարելի յե հեշտությամբ պոկել։

Սկսնակ յերկրաբանները յերեմն կարող են անորդանական գոյացությունը խեցական բրածոյի հետ չփոթել։ Այսպես որինակ՝ լեռնատեսակի նեղիկ ճեղքերը չատ անդամ ծածկված են լինում մամունման մուգ գույնի նկարներով, վորոնք հայտնի յեն դենտրիտ

անունով։ Դրանք վոչ այլ ինչ են, յեթե վոչ յերկաթի և մարդանցի աղերի քիմիական արտադրություններ։ Մի քանի թերթավոր լեռնատեսակների վրա յերբեմն պատահում են ոձապտույտ գլանակներ, վորոնք հավանորեն սողացող կակլամարմինների հետքեր են։ Յերեմն ել հողմահարության չնորդիվ այնպիսի «Ճեավոր քարեր» են սոտացվում, վոր հիշեցնում են այս կամ այն բույսը կամ կենդանուն։ Ահա՝ բնության այս խաղերը վոչ մի կապ չունեն որդանական ձեւերի հետ։ Այս սխալներից գերծ մնալու համար պետք ե ասել, վոր բրածոների մեծ մասը ավելի պինդ նյութից և լինում, քան այն ապառը, վորի մեջ նա կա և նրանից բաժանվում ե խիստ սահմանագծերով։

Ինչո՞ւ այսչափ կարեւորություն ենք տալիս բրածոներին։ Վորովհետև նրանք են յերկրագնդի նստածո շերտերի անցյալ պատմության միակ վկաները։ Կենդանաբանության և կենսաբանական յերկութներին ծանոթ մարդը գիտե, վոր ծովային ծփանքներին յենթակա ակերի մոտ բնակվող կակլամարմինները հասու խեցիներ ունեն, իսկ նույն տեսակին պատկանող կակլամարմիններից նրանք՝ վորոնք հանդարտ ափերի մոտ են ապրում, անհամեմատ՝ բարակ։ 300 մետրից ավելի խորության մեջ, վորտեղ լույսի վոչ մի նշույլ չկա, պատահում են տեսողության որդաններից զուրկ կամ յերեմն ընդհակառակը, չափազանց խոշոր աշխերով որդանիզմներ։ Բայց այստեղ ել պետք ե շատ զգույշ լինել, վորովհետև կույր կենդանիների պատահում ենք նաև ծանծաղուտների տիղմի մեջ կամ մութայրերում։ Մի խոսքով՝ պետք ե գգուշանալ շտապ յեղակացություններ հանելուց այս կամ այն ձեւի մա-

սին, մինչև վոր նրա բոլոր ելեմենտները ինսամքով
քննության առնենք:

Ինչպես տեսնում եք, բրածոները կարող են մեզ
ողնել տվյալ վայրի այս կամ այն շերտի հնության
ժամանակամատ կամ այն շերտի հնության
մեջ իմանում ենք, թե այս կամ այն ապառը նախ և
առաջ չըի մեջ ե առաջացել, թե վոչ, ուրիշ խոսքով
տվյալ վայրը, վորանել մեր ապառն ե, մի ժամանակ
ծով ե յեղել, մի՞ն, թե գետ: Իսկ վորպեսզի կարո-
ղանանաք վորոշել, թե նա այս յերեք ջրավազաննե-
րից վորի մրուրն ե, հարկավոր ե վորոշել, թե այդ
ապառի մեջ կենդանական և բուսական ինչ քարածոներ
կան: Իսկ վերջիններս կարելի յե հայտնաբերել կամ
մուրճի ոգնությամբ ապառը կոտրելով կամ նրա հողմ-
նահարված բեկորներն ուսումնասիրելով.

Իսկ մասածն արդեն պալեօնտոլոգիայի կամ հնէ-
արանության գործն ե վորոշել, թե տվյալ բրածոները
ծովային, թե անալի ջրերի կենդանիներին և բույսե-
րին են պատկանում:

15. ՅԵՐԿՐԱՇԵՐՏԵՐԻ ՀԵՐՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Տվյալ վայրի մերկացումները, ապառները և բրա-
ծոներն ուսումնասիրելուց հետո մնում ե մի աշխա-
տանք, վոր համեմատաբար ամենից դժվարն ե և վորը
կատարելու համար պահանջում ե յերկրաբանական
լուրջ դիտելիքներ: Այս ե՝ վորոշել, թե տվյալ վայրի
յերկրաբանական շերտերը յերկրի պատմության վոր-
ժամանակին են պատկանում:

Այս բանը յերկրաբանները կատարում են գիտու-
թյան մշակած զանազան մեթոդների և «Առաջնորդող
ըրածու»-ների զեկավարությամբ: Իսկ մենք կրակա-
կանանք միայն նրանց սահմանած կարգերը մեջ-
բերելով:

1. Նախնական երա, կամ ինչպես ընդունված ե
կոչել «Առոյան», այսինքն կենդանի եյակներից զուրկ
չըջան, վորովհետեւ այդ շրջանի մետամորֆիք ապառ-
ների մեջ չի գտնված վոչ մի բրածոյի հետք: Առոյան
երան կարելի յե յերկրի պատմության «նախապատ-
մական» շրջանը համարել: Այդ այն ժամանակներն են,
յերբ յերկրադնդի յերեսը ծածկված ե յեղել իսկս
տաք և աղի ծովերով:

2. «Եռօյան» երան յերկրի պատմության «կյան-
քի արշալույսն» ե: Այդ երայի շերտերում արդեն
բավականին որգանական մնացորդներ են գտնվում,
թեև չառ դժվար ե նրանց ինչ լինելը բնորոշել:

3. Պավեոզոյան Երան յերկրի պատմության հին դարերը պետք ե համարել։ Որդանական կյանքի բարձր կազմակերպված ներկայացուցիչներ կան, բայց «Հին» յուրահատուկ հատկանիշներով։ Ապառները պնդացած տիղմ, ավաղ և խիճաքարեր են։

Այս շրջանում կլիման չափազանց տաք ե յեղել. կենդանիները խոչոր ու բազմազան՝ հսկայական ձրկներ, յերկենցաղներ և մողեսներ։ Բույսերից՝ պտերներ, ձիածետներ և գետնամուցկներ, վորոնց մեծությունը հսկայական չափերի յեր հասնում։

4. Մերգոյան Երա—Յերկրի պատմության միջին դարերն են։ Արդեն կլիմայական դոտիները առանձնացել են։ Բուսական և կենդանական հին բնույթը փոխվել է։ Անտառը ժամանակակից տեսք ունի և նույն տեսակները։ Կենդանիներն են՝ հսկայական մողեսներ, խեցգետնանմաններ, ձկնանման պոչերով ու լողակներով, 40 մ. յերկարությամբ դինոզավրներ, թռչող մողեսներ, ատամնավոր թռչուններ և այլն, վորոնք վոչնչով նման չեն ժամանակակիցներին։

5. Կայնազոյան Երա—Յերկրի պատմության նորդարն ե։ Բուսական և կենդանական աշխարհները ժամանակակից նոր ձևեր են ընդունում։ Սկզբում, ի-հարկե, մի փոքր տարրերվում են, բայց ժամանակի ընթացքում այդ տարրերությունն ել հարթվում և։ Կլիմայական դոտիներն արդեն կտրականապես ինքնուրուցվում են։ Այս երայի վերջում յերկրագնդի կլիման այնքան և ցրտում, վոր Հյուսիսային Ամերիկան և Յեփրոպան ծածկվում են սառուցով։ Սառուցի հըսկայական զանգվածները տարածվում եյին Սկանդինավի բոլոր կողմերը 2-3 կիլոմետր հաստությամբ։


Քիչ-քիչ բարեխառն կլիման իր իրավունքների մեջ և մտնում և սկիզբ ե դրվում ժամանակակից յերկրաբանական եպոխային։

Սարցադաշտային եպոխան, վորի կենդանի վկան և յեղել նախամարդը, իրենից հետո թողել և բազմաթիվ հիշատակարաններ՝ հանածոններ և վալուններ, վորոնք այդ գարերի բնորոշ հատկանիշներն են։ Համառոտ գծերով այս և մեր յերկրագնդի պատմության տարեգրությունը, վորի ընդհանուր տախտակը բերում ենք ուսում։


16. ՅԵՐԿՐՈՒՄԱՎԱՆ ԳԼԻՎԱՎՈՐ ՇԵՐՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱՎԱՆ ԿԱՐԳԸ,
ԲՈՒԽԱՎԱՆ ՅԵՎ ԿԵՆԴՐԱՎԱՆ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱԽՏԱՎԵ

| Հիրաներ՝ հաստություն | Կենքանակն ԱՇԽԱՐՀ | Բուռա- կան աղբարձ | Մարդու կանաց աղբարձ |
|----------------------------------|--|---|--------------------------------------|
| Ժամանակ՝ առաջարկա- հաղթակա | Մարդու լերման գալլ | Ճգոյք լզուոկիքուզ | Թագավարությունը |
| Յերրորդա- կան եղանակ | Բարձր կամչի կամչատներ՝ միջատակեր- ներ, պաղպակերներ, ամբակավորներ, կասիկներ; Առաջին թիթեռներ; | Ճգոյք լզուոկիքուզ | Կա թիւսանների թագավարությունը |
| Կառշճի | Առանձակուր թոշուններ, Անլորդավակուր- ներից, հետ բացված ամժակեռներ. | Ճգոյքուիզն դ ճգոյքուիզն | Ճգոյքուիզն դ ճգոյքուիզն |
| Ցուրտ | Թիւսիլ նախամորդեներ և նախաթուռուն- ալիքապոտենիքուս; անդունտավակուրներից, ամժակեռ և բեկեթներ: | Վրակրավոր միջներ. պարմակավոր նախաթուռուն- ալուսուններ; Բաղմանթիվ դինոզուրներ ի խախողակլր. | Յերկան նախամորդեներ և նախաթուռուններ |
| Տրիսու | 400 պէտ տուրը՝ Արանցուածությունը՝ 400 պէտ տուրը | Ճգոյքուիզն դ ճգոյքուիզն | Ճգոյքուիզն դ ճգոյքուիզն |


| Պելման | Զանադան յիշկինցուներ; Հասդոյն առղուններ | Յերկան նախամորդեներ թագավարություն |
|-----------|---|---------------------------------------|
| Քաղածիսի | Նախամակալներ, ուղարիթներ, միջատներ, սաղմաններ, բաղմաթիվ դինոզուրներ հոտըլածուան, պրոդրուկտուուն | Սպուլատու. ըստ լակու թագ. |
| Դակույտն | Բարմակաթիվ լամապատ ձկներ սպակերթերաներ | Ճգոյքուիզն դ ճգոյքուիզն |
| Սիւրուլան | Նախամիջաներ, նախամիջատներ և կարմէններ, առանցուածություններ, արևորթեններ | 500 պէտ տուր կամ 100 պէտ տուր |
| Կեմըլըլան | Բացի լունաշաբաթուներից մաս կենդանիներ փշանորթներ, մասություններ | Ճգոյքուիզն դ ճգոյքուիզն |
| Լուղուան | Մի քանի որդանի զթիթիթի հասքեր դրամին, դնելու և բարձրացներ թիւթաքաւուն | պատու առգանցու |




3. ՔԱՐԱՇԻ ԵՊՈԽԱՅԻ ԲՈՒԽԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ



4. ՊԱԼԵՈԶՈՅԱՆ ԲՐԱՇՈՎՆԵՐ



5. ՄԵԶՈԶՈՅԱՆ ԲՐԱՄՊՈՆԵՐ



6. ՄԵԶՈԶՈՅԱՆ ՍՈՂՈԽՆԵՐ ՅԵԿ ԿԱՔՆԱՍՈՒՆԵՐ, ԶԿՆԵՐ



ՀՀ Ազգային գրադարան



NL0266359

11273

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.